№ 162 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 29

1906

ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 29 № 162

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բագուի հայոց եկեղեցական-ծխական դպրոցների համար

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ

1) Օրիորդաց դպրոցի համար աւագ ուսուցչուհի՝ շաբաթական 12 դասով և աւագութեան համար 500 ր. վարձատրութիւն։ Ցանկալի է, որ խնդրատու թեկնածուն բարձրագոյն մանկավարժական կրթութիւն ստացած և վարչական փորձառութիւն ունեցող անձնաւորութիւն լինի։

2) Երկու ուսուցիչ երգեցողութեան դասերի համար, իւրաքանչիւրը շաբաթական 16—18 դասով։ Երգեցողութեան ուսուցիչները մասնագէտ երաժիշտներ պիտի լինեն, որոնցից մինը նաև քառաձայն երգեցիկ խումբ կազմելու և ղեկավարելու հմտութիւն պիտի ունենայ, որի համար առանձին վարձատրութիւն կը ստանայ։

3) Տղայոց դպրոցի համար մի մասնագէտ նկարչութեան ուսուցիչ՝ շաբաթական մինչև 18 դասով։

Դասագինն է՝ մինչև 12 դասը 75-ական րուբլի, իսկ 12-ից վեր իւրաքանչիւր դասը 50-ական րուբլի։

Ցանկացողները թող բարեհաճեն դիմել հոգաբարձութեան մինչև օգոստոսի 20-ը, ներկայացնելով իրանց կրթական ցենզի և անցեալ գործունէութեան մասին համառօտ տեղեկագիր։ Հասցէ. Баку. Приходскому попечительству Бакинскихъ церквей։

առ. 2—3

Նատալիա Վարլամօվնա և Տիգրան Միքայէլեան Շահինեանցները, Վարվառա Միքայէլեան Նազարեանը, Աննա Միքայէլեան Բաղդասարեանը և Նազար Յովհաննիսեան Նազարեանը ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր թանկագին որդու, 2-րդի, 3-րդի և 4-րդի թանկագին եղբօր և վերջինը իր աներորդի Թիֆլիսի պատուաւոր քաղաքացի՝

ԵԱԳՕՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՇԱՀԻՆԵԱՆՑԻ

մահը։ Հոգեհանգիստը այսօր, յուլիսի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը, կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Աբաս-Աբադսկի տուպիկ № 9 սեփ. տուն) դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Վերայի գերեզմանատանը։ (շ. կ.) 1—2

«Ժողովրդական Ազատութեան» կուսակցութիւնը ծանուցանում է սրանով Տերիօքում դաւաճանօրէն սպանված Պետական Դումայի անդամ՝

ՄԻԽԱՅԻԼ ԵԱԿՕՎԼԵՎԻՉ

ՀԵՐՑԵՆՇՏԷՅՆԻ

յիշատակը յարգողներին, որ առաջիկայ կիրակի օր, յուլիսի 30-ին, տեղի կունենայ հոգեհանգիստ Քաշվէթի ս. Գէորգի եկեղեցում, ցերեկվայ ժամի 2-ին։ (հ. շ.) 2—2

ՀՐԱՒԷՐ

Ջգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցու մեծարգոյ երկսեռ ծխականները (21 տարեկանից վեր) երկրորդ անգամ հրաւիրվում են ժողովի նոյն եկեղեցին յուլիսի 30-ին, կիրակի առաւօտեան ճիշտ 11 ժամին, զբաղվելու Ջգրաշէնի երկսեռ դպրոցների հարցով և ընտրելու երեք պատուիրակ ռուսահայոց կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու։

Այս ժողովը վաւերական կը համարվի անկախ ներկայ եղող ծխականների թւից։

Առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվելու։

Ջգրաշէնի ս. Աստուածածին եկեղեցու՝

Գէորգ ա. ք. Աբուլեան
Երէցփոխ՝ Ալէք. Քալանթարեան
առ. (շ. կ.) 1—2

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Ելիզաւետինսկայա, 40.

Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի. (ա. օ.) առ. 1—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գոնէ այժմ. Վերջին տեղեկութիւնք. Պատասխանի փոխարէն. Հերցենշտէյնի թաղումը. Կովկասի թուրքերի մի կոչը. Րէֆորմների շարժը սկսվում է, Շարժումներ. Ընտրութիւնների շուրջը. Պէտք է պարզվի. Ինչ կը լինի սրանից յետոյ. Մոռացված անկիւններ. Ֆինլանդիայում. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Նամակ Ֆրանսիայից։ Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԳՈՆԷ ԱՅԺՄ

I

Շուշու թուրքերը վճռել են վայր դնել զէնքը և ամուր հաշտութիւն կայացնել։

Այդ են ասում մեզ հեռագիրները։

Նրանք սպասում են Բագուից մի յատուկ պատգամաւորութիւն, որպէս զի նրա հետ միասին և նրա աջակցութեամբ ձևակերպեն և ամրացնեն հաշտութիւնը։

Միայն կարելի է ողջունել այդ որոշումը։ Բայց միևնոյն ժամանակ ցանկալի մի բան, որ այդ որոշումը լինի հաստատ, անկեղծ, առանց յետին մտքի։

Տանջվել են երկու ժողովուրդն էլ, հալումաշ են եղել, քամվել են։ Երկուսն էլ աւերված, երկուսն էլ սնանկացած, երկուսն էլ կարօտութեան ծայրին հասած, իսկ մեր առաջին կանգնած են աշնան և ձմեռվայ սպառնալից օրերը։

II

Դուք կարդացիք, որ քոչւորները մի արտասովոր արագութեամբ սկսել են իջնել լեռներից և շտապում են իրանց ձմերանոցները, իրանց գիւղերը։

Այդպէս լուրեր ստացվել են Ղազախի շրջանից և ուրիշ տեղերից։

Անկասկած, քոչ-որ ժողովուրդը երկիւղ է կրում վտանգներից և շտապում է օր առաջ իր տանը լինելու։ Շուշու և Զանգեզուրի դէպքերը չափազանց յուզիչ և անհանգստացնող էին, և իւրաքանչիւր ոք մտածում է, որ մի գուցէ այնտեղ սկսված ընդհարումները ընդարձակվեն, վարակեն բոլոր շրջանները և նորից շարժման մէջ գցեն բոլորին։

Բնական երկիւղ է և հասկանալի է, որ մարդիկ պէտք է դիմէին նախազգուշական միջոցների։

III

Բայց այդ բնական նախազգուշական խորհրդածութիւններին աւելանում են յաճախ չարամիտ դաւադրութիւններ, որոնց հեղինակները օգտվում են ժողովրդի դիւրահաւատութիւնից ու վախից և առաջ են տանում իրանց [illegible] նպատակները։

Անա այդ դաւադրութեան առաջն առնելու վրա մի առանձին ուշադրութիւն պէտք է դարձնեն երկու հարևան ազգերը և թոյլ չը տան, որ կողմնակի դիւային ծրագիրները աջողութիւն ստանան և նորից դժոխքի արհաւիրք ստեղծեն մեր երկրի մէջ, առաջ բերելով նորանոր աղէտներ մեր թշուառութեան մատնված ազգաբնակութեան համար։

Ուստի աշխատանք և ջանք գործ դնելով հաշտութիւն կայացնել Շուշու և Զանգեզուրի միմեանց հետ կռւող ժողովրդական մասսաների մէջ, միևնոյն ժամանակ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել և այն հանգամանքի վրա, որ նոր առիթներ չը ստեղծվեն ընդհարումների համար ոչ միայն այդ տեղերում, այլ և ուրիշ շրջաններում։

Այլապէս՝ հրդեհը նորից կը բորբոքվի և նորից մենք կանգնած կը լինենք անհամար զոհերի ու կորուստների առաջ։

Հաշտութիւն օր առաջ։

Հաշտութիւն, որպէս զի գիւղացին կարողանայ ազատել մի փոքր բան այն բերքից, որ դեռ կարող են տալ նրա հողը և տնտեսութիւնը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 28 յուլիսի

Այստեղի թուրքերը նշանակութիւն են տալիս Բագուի պատգամաւորութեանը, որ պէտք է գայ Շուշի։ Քաղաքի թուրք հասարակութեան կողմից հեռագիր ուղարկվեց Թագիեվին, խնդրելով որ նա աջողեցնի Բագուի պատգամաւորութեան գալը, որով հիմք կը դրվի ամուր հաշտութեան հայերի և թուրքերի մէջ։

Թուրքերը սպասում են այդ պատգամաւորութեանը։

Նրանք յոյս ունեն, որ հաշտութիւն կը լինի ամենուրեք՝ թէ քաղաքում և թէ գիւղական շրջաններում։

Երբ որ Բագուի պատգամաւորութիւնը ճանապարհ կընկնի, Շուշուց կը գնան ընդառաջ նրան հանդիպելու և ընդունելու։

—

Քարվանսարա, յուլիսի 28-ին

Յուլիս 26-ին թուրքերի քոչը Ուզունթալի պօստային կայարանի մօտ եղած ժամանակ՝ անցնելիս է եղել սայլով նոյն գիւղացի Լևոնը իր որդու հետ. փոքր յետոյ սայլը արձակում են խուրձ բարձելու համար և երբ վերջացնում են գործը՝ հայրը ուղարկում է որդուն եզները բերելու մօտիկից, որ լծեն. այդ միջոցին տղայի վրա յարձակվում են քոչիները. հայրը նկատելով այդ՝ վազում է դէպ այն կողմ երեխային ազատելու. հէնց այդ բոպէին յետևից գնդակահարում և սպանում են Լևոնին։ Պօստատան սարաժնիկները իսկոյն ձերբակալում են յանցաւորին իր ընկերներով և բոլոր տաւար-ոչխարները քշում տանում են դէպ Քարվանսարա մինչ յանցաւորներին արդարադատութեան յանձնելը։

—

Զանգեզուրի Ղաթար պղնձահանքի կառավարիչները, երկու ինժինէրներ, մեկնելով պղնձահանքից դէպի Թիֆլիս, գալիս են ոչ թէ Շուշու ճանապարհով, այլ Նախիջևանի վրայով և Օրդուբատ-Նախիջևանի ճանապարհի մէջտեղը ենթարկվում են թուրք աւազակների յարձակման ու կողոպտման, ամսիս 24-ին։ Ինժինէր Կալակ վիրաւորվում է և այժմ գտնվում է Նախիջևանի հիւանդանոցում։ Աւազակները չեն բռնված։

—

Վլադիկավկազ քաղաքից, ինչպէս հաղորդում է «Правда» լրագիրը, ուղարկվել է Կովկասի Փոխարքային հետևեալ հեռագիրը.

Մենք, Հիւսիսային Կովկասի և Դաղստանի լեռնային բնակչութեան ներկայացուցիչներս, ստացել ենք ամենածայրայեղ աստիճանի յուզիչ լուրեր՝ այն անելանելի դրութեան մասին, որի մէջ գտնվում են այժմ մեր Անդրկովկասի եղբայրները Շուշում և որոնց անլուր կորուստ է սպառնում։ Տպաւորութեան համար առաջ ենք բերում ներքոյիշեալ հեռագիրը, որ մենք ստացել ենք յուսալի աղբիւրներից յուլիսի 18-ին. «Շուշում երեկվանից հրացանաձգութիւնը մեղմացաւ, բայց դրութիւնը շատ յուզալից է, վտանգաւոր։ Գոլոշչապովը տեղափոխվել և բնակութիւն է հաստատել հայոց թաղում, ուր կենտրոնացրել է բոլոր զօրամասերը, որոնք համախմբվելով ջանֆիդաների հետ՝ բացարձակօրէն գործում են արտաքին օգնութիւնից բոլորովին կտրված մահմեդականների դէմ։ Կոչարլուն բոլոր տներով, մզկիթով, Մամա Աղա Դադալի մի մասը ոչնչացվել են կօզակների կրակից։ Մարդկային զոհերը սակաւ են, բայց համատարած կոտորած է սպասվում մահմեդականների, որ մնացել են անպաշտպան և ընկճվել են անհաւասար կռւից։ Ամբոխը շատ է յուզվում, բայց առ այժմ գործում է լեգալ կերպով»։ Այս հեռագրից Ձերդ Պայծառափայլութիւնը տեսնում է, որ Շուշում կատարվող դրամայի մասին տրված պաշտօնական տեղեկութիւնները բոլորովին տարբեր են իրականութիւնից։ Մեր համեղբայրների ցաւալի վիճակով խորապէս վշտացած և շահագրգռված, ինչպէս Անդրկովկասի, այնպէս էլ ամբողջ Կովկասի հանգստութեամբ, ամենախոնարհաբար խնդրում ենք Ձերդ Պայծառափայլութեան ձեռք առնել արտակարգ միջոցներ՝ Շուշու մահմեդականներին ազատելու և կարգ ու հաստատ հաշտութիւն մտցնելու համար, որի համար էական անհրաժեշտութիւն ենք համարում գեներալ Գոլոշչապովի և հարիւրեակ կօզակների հրամանատար Կազարօվի հեռացնելը իրանց պաշտօններից։ (Հետևում են ստորագրութիւններ, որոնց մէջ Պետական Դումայի նախկին անդամ Ելչէրխանովի ստորագրութիւնը)։

Փոխարքան հեռագրով պատասխանել է յուլիսի 21-ին Տէրէքի շրջանապետի միջոցով. «Հաճեցէք յայտնել հեռագիրը ուղարկողներին, որ նրանց խնդիրքը՝ հեռացնել գեներալ Գոլոշչապովին՝ չէ կարող յարգվել. զօրքերը ազդու կերպով պէտք է գործեն բոլոր նրանց դէմ, որոնք խանգարում են անդորրութիւնը, լինեն նրանք հայ թէ թուրք անխտիր. և պէտք է բոլորովին դադրեն անկարգութիւնները, ում կողմից էլ որ լինեն դրանք—մուսուլմանների թէ հայերի. րեպրեսիւ միջոցների վերացում չէ կարող լինել»։

—

Բագուի «Իրշադ» թուրք լրագրում տպված է հետևեալ հեռագիրը, որ մենք առաջ ենք բերում «Ալիքի» թարգմանութեամբ և որը ուղարկել են Փոխարքային Վլադիկավկազում բնակվող շուշեցի թուրքերը.

Բարձր Կայսեր Փոխարքայ մեծ կոմս Վորոնցով-Դաշկովին.

Շուշուց մուսուլմանների մասին ստացված լուրերը մեզ պատմելու անկարելիութեան չափ վիշտ պատճառեցին։ Երեւում է, որ գեներալ Գոլոշչապովը, իր կօզակները հայ խմբերին միացնելով, մեր մայրերին, քոյրերին, հայրերին ու եղբայրներին թնդանօթի ու հրացանի է բռնել։

Փոխարքայ, սրանից քիչ ժամանակ առաջ, երբ յեղափոխութեան հեղեղը Ռուսիային իր հոսանքի առաջն էր գցել, եթէ մեր մուսուլմանների հաւատարմութիւնը ու շոյող անկեղծութիւնը չը լինէր, հիմա Կովկասը ընդհարումների ու յեղափոխութեան կրակով հրդեհվել էր. բայց մենք, մեր այդ հաւատարմութեան ու անկեղծութեան մէջ հաստատ մնալով, պահպանեցինք Կովկասը։

Ափսոս, ափսոս. հիմա նոյն իսկ նոյն զօրքերը, նոյն կառավարութիւնը իրենց այդչափ հաւատարմութիւն ցոյց տուող նոյն մուսուլմանների դէմ ուղղեցին իրենց թնդանօթները։

Արդեօք մեզ համար կը լինէ՞ր սրանից դառն ու արհամարհական մի վարձատրութիւն։

—

Թաւրիզ, 13 յուլիսի

Օրէ օր սպասվում է ցոյց կառավարութեան դէմ. Թէհրանի դէպքերի արձագանքն է անշուշտ. որոշված էր այսօր, ամսիս 13-ին։ Բայց, ինչպէս երևում է, չը պիտի լինի. երբ թէ մի քանի օրից ի վեր քաղաքիս բոլոր մէջիտները փակել են նոյն դէպքերի առիթով. երէկ պիտի լինէր ղուռանի հանդիսաւոր կնքումը, իբրև ամենամեծ երդում, որպէսզի ոչ ոք չը համարձակվի ետ մնալ ընդհանուր ցոյցից։ Կառավարութիւնը մտադիր է Ռահիմ-խանի ձիաւորներից բերել տալ։ Դժուար թէ ժողովուրդը կարողանայ մի բան անել։ Այժմ սպասում են Թէհրանից նոր տեղեկութիւններ,

Վանից յուլիսի 7-ին գրված մի նամակ շատ տխուր գոյներով է նկարագրում հայերի դրութիւնը. անյայտ մարդիկ փորձել են կենտրոնական բանտը հրդեհել. այրվել է միայն ձերբակալված յեղ. գործիչ Վարդգէսի սենեակի առաստաղը, որից կառավարութիւնը եզրակացրեց, որ հայերի գործն է այդ՝ Վարդգէսին ազատելու համար. իսկոյն դէպքի տեղն են գալիս ոստիկաններ և զինւորներ. հայ բանտարկեալներին ենթարկում են սարսափելի ծեծի. այդ անողորմ ծեծից մեռնում է Սօլեար Մ բոխչը. միւս օրը մեռնում են Վարդգէսը և մի ուրիշը։ Մի քանի թուրք բանտարկեալներ խիստ ծեծի են ենթարկվում արաբերէն երգեր երգելու պատճառով։

Արճէշի կողմերում կռիւ է լինում յեղափոխականների և զինւորների մէջ. անձի կորուստ չէ լինում, բայց խմբի բոլոր պատրաստութիւնները գրաւվում են։ Այս բոլոր դէպքերը 96 թւի սարսափներն են յիշեցնում. արդէն տնտեսապէս վերին աստիճանի քայքայված դրութիւն է տիրում Վանում և ամբողջ Վասպուրականում. ժողովուրդը պատրաստ է ամեն բան տալ, միայն կարողանայ երկրից դուրս գալ։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

II

Ժողովրդական քուէն պէտք է լինի ազատ։

Ժողովրդական քուէն չը պէտք է վտանգված լինի։

Ժողովրդական ձայնը և կամքը պէտք է հեռու լինեն բռնութիւնից և ապօրինական սպառնալիքներից։

Անա ինչ ենք ասում մենք։

Դա շատ որոշ է, շատ կարևոր։

Իսկ եթէ «Ալիքը», դա անորոշ է համարում, աւելի վատ նրա համար։

Նա աշխատում է արդարացնել եղած [illegible] դէպքերը և հայութեան բոլոր անկիւններից տեղացող արդար ժողովրդական բողոքները նա չէ ուզում նոյն իսկ ուշադրութեան առնել։

Իսկ երևոյթը կարևոր է և հիմնական։

Նա վերաբերում է այն էական խնդրին, որի վրա պէտք է կառուցվի ժողովրդական կամքի ազատ արտայայտութիւնը։

Մենք ասել էինք, որ Դաշնակցութեան «ծրագրի խառնափնթորութիւնը, անորոշութիւնը կամ բացակայութիւնը միացած միլիտար կամ ռազմական տարրերի անսանձ գործունէութեան հետ հասարակական ասպարէզում՝ դարձրել են փայփայված, ինքնապաշտպանութեան համար սիրելի կազմակերպութիւնը անժողովրդական և տուել են նրան թայֆայական կերպարանք»։

Մի՞թէ գաղտնիք է որևէ մէկի համար այն խառնափնթորութիւնը և անորոշութիւնը, որի մասին մենք ասել ենք շատ անգամ և այսօր էլ կրկնում ենք։

Մեր հասարակութեան առաջ ցցվել է այն հանելուկը, թէ ինչ դաւանանքի, ինչ ծրագրի տէր մարդիկ են դաշնակցականները։

Ոչ սօցիալ-դեմօկրատները, ոչ սօցիալիստ-յեղափոխականները, ոչ ժողովրդական ազատութեան կուսակիցները, ոչ ֆեդերալիստները, ոչ պահպանողականները մինչև այժմ չը կարողացան իմանալ, թէ ինչ քաղաքական դաւանանք ունեն դաշնակցականները. նրանք հետևում էին դաշնակցականների գործունէութեան և սկսում էին ենթադրութիւններ անել։ Եւ վերջ ի վերջոյ գալիս էին այն եզրակացութեան, որ այդ մարդիկ կամ հաստատ դաւանանք չունեն, կամ իրանք էլ չը գիտեն, թէ ինչ ծրագրի են հետևում և կամ նրանց թոյլ է տրված դաւանել ամեն մի բան՝ սկսած Բակունինի հայեացքներից մինչև Մարկոս Աղաբեգեանի հրահանգները։

Բերանից բերան պատմվում են դէպքեր, երբ նոյն ժողովում եղած դաշնակցականներից իւրաքանչիւրը բոլորովին տարբեր հայեացքներ է պաշտպանել և [illegible] առաջացրել մի քաօս։

Բանից դուրս է գալիս, որ դաշնակցականները չոկ բան են, իսկ Դաշնակցութիւնը՝ չոկ։ Առաջինները կարող են ամեն տեսակ հայեացքներ ու ծրագիրներ ունենալ, իսկ Դաշնակցութիւնն էլ իր հերթին ունի իր ծրագիրը։

Բայց կա՞յ արդեօք այդ վերջինը։

Այդ հարցը տալիս է ինքն իրան «Ալիքը» և պատասխանում է այսպէս.

Բայց ճշմարիտ է, որ Դաշնակցութիւնը որոշ ծրագիր և դաւանանք չունի։ Անցէք մեզ մօտ, պ. Քալանթար, և մենք ձեր տրամադրութեան տակ կը դնենք մի քանի օրինակ այդ ծրագիրներից։

Եւ եթէ, ընթերցող, դուք էլ հետաքրքրվում էք այդ ծրագրով, ապա կարող էք «անցնել նրանց մօտ, և նրանք ձեր տրամադրութեան տակ կը դնեն մի քանի օրինակ այդ ծրագիրներից»։

Ուրեմն հարցը վճռված լուծված է։

Սակայն որքան աւելի լաւ կը լինէր, եթէ նախ և առաջ այդ ծրագիրները տրվէին դաշնակցականներին իրանց, որպէս զի նրանք միաժամանակ չերգէին ու չը խաղային զանազան օպերաներից և մէկը հանդէս չը գար հասարակական ասպարէզում կօզակի, միւսը՝ սիրահարված պատանու, երրորդը՝ միջնադարեան ասպետի, իսկ չորրորդը՝ միտինգի դեմագոգի կերպարանքներով։

Ամենքը մեր հասարակութեան մէջ յիշում են, թէ ինչ խղճագոյն կացութեան մէջ էր ընկել դաշնակցական մտածողութիւնը, երբ հրապարակի վրա դրված էր Պետական Դումայի ընտրութիւնների գործը։

Պէտք էր որոշ պատասխան տալ, իսկ նա սովոր չէր որոշ, համոզված և պատճառաբանված խօսքի։

Եթէ գործը թոյլ տար, նա կը քաշքշէր, կը ձգձգէր և վերջ ի վերջոյ անորոշութեամբ էլ կը վերջացնէր. բայց պէտք էր վճռական պատասխան տալ և որոշ դիրք բռնել։

Դժոխային տանջանքներ։

Եւ ահա մի օր լսում ենք, որ Դաշնակցութիւնը մասնակցելու է ընտրութիւններին, սակայն դուրս եկաւ, որ սխալ է եղել։ Նա չէ մասնակցելու. նա հրատարակում է բօյկօտ։

Դարձեալ սխալ դուրս եկաւ։

Նա հրատարակում է կիսաբօյկօտ, կիսաընտրութիւն. այս կարգով՝ առաջ ընտրութիւն, յետոյ ճանապարհի կէսին բօյկօտ։

Այդ էլ սխալ դուրս եկաւ։

Նա հրատարակում է կատարեալ բօյկօտ։

Եւ վերջ ի վերջոյ նա կանգ առաւ կատարեալ բօյկօտի վրա։

Եւ մի օր մեր հասարակութիւնը լսեց ու իմացաւ, որ Դաշնակցութիւնը կանգ է առել այդ անխախտելի որոշման վրա։

Ոչ ոք չէր ուզում հաւատալ իր աչքերին և ականջներին։

Բայց դժբաղդ որոշումը իրականութիւն էր։

Եւ յետոյ շատ ու շատ անգամ դաշնակցականները փոշմանեցին ու զղջացին, բայց արդէն ուշ էր։

Իսկ հասարակութեան համար այդտեղ սկսեց շատ բան պարզվել այն մարդկանց վերաբերմամբ, որոնք յաւակնութիւն էին ունեցել ղեկավարողներ լինելու։

Անցաւ ժամանակ՝ փակվեց Դուման։

Դաշնակցութիւնը փորձեց այդ բանով իր բռնած դիրքը փաստաբանել և ահա նա պատգամախօսեց մեր հասարակութեան։

Անա մի կտոր.

Դաշնակցութիւնը էն գլխից լաւ հասկանալով արիւնռուշտ բիւրօկրատիայի դաւերը, արժանի գնահատութիւնը տուեց Դումա կոչված այդ խղճուկ հաստատութեանը, նրա դէմ բօյկօտ հրատարակելով։

Այո, մենք չը կամեցանք սին յոյսերով օրօրվել, մենք չուզեցինք մեր մասսաների գիտակցութիւնը մթնացնել, աւելորդ համարեցինք եռանդ և ժամանակ գործադրել ու մասնակցելու ընտրութիւն-կոմեդիային։

Մենք բօյկօտ հրատարակեցինք Դումայի դէմ, քաջ գիտենալով որ այդ հաստատութիւնը լաւագոյն դէպքում էլ անկարող պիտի լինի ժողովրդական պահանջներին համեստ չափերով իսկ գոհացում տալ։

Եւ չը սխալվեցինք։

Դուման ամիսներ շարունակ ժողովրդի անունից արտասանեց ճառեր, միայն ճառեր, իսկ գործ և ոչ մի հատ։

Նա արիւնոտ բիւրօկրատիայի ձեռքում դարձաւ մի նպաստող միջոց արտաքին փոխառութիւնը կնքելու։

Նա գուրգուրեց ժողովրդի ուշադրութիւնը վարդագոյն յոյսերով, որոնցից և ոչ մէկը իրականութիւն չը դարձաւ...

Եւ ահա բոլորից յետոյ բռնակալ ռեժիմը ցրում է այդ ճառախօս հիմնարկութիւնը, որովհետև այդ ճառերն էլ հաճելի չէին նրան, որովհետև Դուման փորձեց խօսքից գործի անցնելու, որովհետև կառավարութիւնը զգում է, որ ժողովրդի ծովացած զայրոյթը վերջ ի վերջոյ պէտք է բռնկվի ուժգին թափով։ Նա սոսկում է այդ բռնկումից և ուզում է խանգարել նրա կազմակերպվելուն։

Առաջ բերած պարբերութիւններից ընթերցողները տեսնում են, որ Դաշնակցութիւնը խելացի և իրաւացի է համարում իր արածը և նա ամենևին չէ փոշմանում, որ բօյկօտ է յայտարարել «խղճուկ» Դումային։

Չը վիճաբանենք։

Բայց մի հարց է առաջ գալիս, թէ Դաշնակցութիւնը Դումայի հետևեալ ընտրութիւններին կը մասնակցէ՞ թէ՞ դարձեալ բօյկօտ կը հրատարակէ։

Ի հարկէ կը մասնակցէ։

Թէև ընտրութեան պայմանները աւելի ևս աննպաստ պէտք է լինեն և գուցէ Դուման աւելի ևս խղճուկ, բայց նա կը մասնակցէ։

Նախկին տրամաբանութեամբ նա պէտք է բօյկօտ հրատարակէր և աւելի ևս մեծ եռանդով բօյկօտ, քան առաջ։ Բայց նա կը մասնակցէ։

Կը մասնակցէ, որովհետև սխալ է արված, որովհետև առաջ էլ պէտք էր մասնակցել։ Իսկ առաջ բերած առարկութիւնները էական նշանակութիւն չունեն։

Այդ հարցումն էլ մենք վաղուց մեր որոշ խօսքն ասել էինք և նրան պաշտպանում էինք թէ լրագրի էջերում և թէ դասախօսութիւնների միջոցին։

Մի՞թէ կարիք կայ ուրիշ օրինակներ բերել։

Մի՞թէ արժէ յիշեցնել Ներսիսեան և Յովնանեան դպրոցների ուսուցչական կազմերի վերաբերութեամբ «Ալիքի» ընդունած տարբեր դիրքը դէպի հրատարակած բօյկօտը, կայացրած որոշումները և այլն։

Երբ մենք մատնացոյց ենք լինում այդպիսի հարցերի վրա, մեր առաջ գնում են խմբագրական ժպիտներ, զանազան սալ-կօսէների, անձնական ակնարկների նմուշներ։

Այդքան փոքրանալ և մանրանալ—սոսկալի է։

«Ալիքը» չափազանց սաստիկ պատժեց իրան իր «Բլօկի դրօշը» յօդուածով և միանգամայն իրան վայր գլորեց։

Մենք չենք զբաղվի գրական այն գոհարներով, որ տալիս է «Ալիքի» յօդուածը։ Նրանք չափազանց պերճախօս են իրանք իրանց։

Առայժմ բաւական է։

Ա. Քալանթար

Մ. Ե. ՀԵՐՑԵՆՇՏԷՅՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Յուլիսի 22-ին Տերիօքում տեղի ունեցաւ Մ. Ե. Հերցենշտէյնի թաղումը։ Արդէն ժամի 3 և 20 րոպէի ու դեռ աւելի վաղ գնացքով Տերիօք էին գնացել Պետերբուրգի հասարակութիւնից շատերը, գլխաւորապէս ինտելիգենտ դասը։ Բոլոր գնացքներն էլ լի էին։ Ոստիկանութիւնը, այդքան հոծ բազմութիւն գնալու պատճառով, ֆինլանդական կայարանում արտակարգ միջոցներ էր ձեռք առել։ Զինված հետևակ զինւորներ և հեծելազնդեր վխտում էին ֆինլանդական կայարանի և Միխայլովսկի արտիլերիական ճեմարանի շուրջը։ Կայարանի առաջ կանգնած էին քաղաքապահների պահակախմբերը, տասը-տասը հոգուց բաղկացած։ Ցերեկվայ ժամի 5-ին Տերիօք գնացին Պետական Դումայի նախկին անդամներից շատերը և յայտնի հասարակական գործիչներ։ Բազմութեան մէջ նկատվում էին Միլիւկովը, Նաբոկովը, իշխ. Դոլգորուկովը, Կովալևսկին, Ռոդիչևը, Բրամսոնը, Սեդելնիկովը, Զաբոլոտնին, Իօլլոսը, Զենօկովը և ուրիշ շատ շատերը։ Այդ ժամանակ Պետերբուրգից վերադարձաւ և հանգուցեալի այրին։ Մ. Ե.-ի մարմինը դեռևս գտնվում էր Տերիօքի կայարանում յատուկ վագոնի մէջ։ Դագաղը ամբողջապէս զարդարված էր շուշանների ոստերով և կարմիր ու սև դրօշակներով, զանազան մակագրութեամբ։ Դագաղի ետևից գնում էր մօտ 10,000 հոգուց բաղկացած բազմութիւնը։ Դագաղը տանում էին ձեռքերի վրա։ Պսակների թիւը 50-ից աւելի էր։ Բանւորական կազմակերպութիւնները ուղեկցում էին իրանց դրօշակներով։ Հէնց որ դագաղը իջեցրին գերեզման, ներկայ եղողները ծածկեցին նրան կենդանի ծաղիկներով և պսակներով։ Չնայելով որ այդ միջոցին յորդ անձրև սկսվեց տեղալ, այնուամենայնիւ ոչ ոք չէր հեռանում գերեզմանի մօտից։ Մի քանի հոգի ճառեր արտասանեցին։ Առաջինը խօսեց Բոդիչևը։ Իր ճառը նա սկսեց հետևեալ խօսքերով. «Չը վիճակվեց մեզ թաղել հանգուցեալին հայրենի հողում»։ Այնուհետև նա մատնացոյց արեց, որ Մ. Ե. «առաջին զոհն է ռուսական Դումայի գործիչներից», և քանի որ նա կը մնայ այստեղ, Ֆինլանդիայում, դա կը լինի գրաւական այն բանի, որ նա վերադառնալու է հանդիսաւոր կերպով։ «Երբ ազատութիւնը կիշխէ Ռուսաստանում, մենք կը գանք նրան տանելու»։ Տիկ. Ա. Ս. Հերցենշտէյնը իր և իր ընտանիքի կողմից շնորհակալութիւն յայտնեց բանւորներին, որ նրանք կատարեցին Մ. Ե.-ի թաղումը այնպէս, ինչպէս որ վայել էր ազատութեան ռազմիկին։ «Ցանկանում եմ ձեզ աջողութիւն,—ասաց նա,—որ դուք կարողանաք ձեռք բերել մեծ մասը այն բաղդաւորութիւնից, որը հնարաւոր է երկրի վրա, բայց աւելի քիչ արիւն թափելով»։ Նրանից յետոյ խօսեց Բրամսոնը, Սէդելնիկօվը, մի ֆինն բանւոր և «աշխատաւոր խմբակի» ու Տերիօքի բանւորական կազմակերպութիւնների միւս ներկայացուցիչները. Ի. Ի. Պետրունկևիչը շատ յուզված ձայնով ասաց նոյնպէս մի քանի խօսք. «Թոյլ տուէք այստեղ, այս գերեզմանի մօտ, վկայել, որ հանգուցեալը զբաղված էր միայն մի մտքով, որին և նուիրել էր իր վերջին ժամերը,—օգնել մեր ժողովրդին ազատվելու չքաւորութիւնից։ Նա ընկաւ, որովհետև կային թշնամիներ, որոնք տեսնում էին նրա մէջ մի մեծ ույժ։ Նրա զէնքը խօսքն էր, և միտքը՝ ժողովրդական թշնամիների համար սարսափի խրտուիլակ» (пугала)։ Ճառի ժամանակ շատերը լալիս էին։ Ճառից յետոյ բոլոր պսակները ժողովեցին հանգուցեալի գերեզմանի վրա, բանւորները և հասարակութիւնը երգեցին «Յաւէրժ յիշատակը» և խաղաղ կերպով ցրվեցին։ Տերիօքի կայարանում հասարակութիւնը սրտաշարժ ցոյց արեց Տերիօքից հեռացող հանգուցեալի այրուն։ Գնացքը զարդարված էր սև ու կարմիր դրօշակներով։

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՄԻ ԿՈՉԸ

Կահիրէում հրատարակվող «Իջթիհատ» ամսագրի ապրիլի համարում տպված է հետևեալ սրտառուչ կոչը։

«Ո՛վ կրօնի եղբայրներ։

«Արդեօք տեղեկութիւն ունի՞ք մեզանից, Կովկասի դժբաղդ մահմեդականներից։ Ախր մէկ բաց արէք ձեր աչքերը։ Մէկ նայեցէք ձեր շուրջը։ Տեղեկացէք մեր՝ Կովկասի ձեր կրօնի եղբայրների դրութեան մասին։ Տեսէք ինչե՞ր են գալիս մեր՝ թշուառներիս՝ գլխին։ Անկարելիները գալիս են, ո՜վ հարուստ եղբայրներ։ Մեր զաւակները, հայրերը, մայրերը, ազգականներն ու բարեկամները մեր ձեռքից գնացին։ Մեր ծոցում սնուցած կարիճ երիտասարդները մեր ձեռքից գնացին։ Տուները թալանվելով հրդեհի տրվեցին։ Արիւննիս երկրի երեսը ներկեց։ Մէկ տեսէք, մեր տո՛ւն ու վանքից, մեր ողը ու կոծից լեռ ու քար լաց են լինում։ Լաց լինելուց մեր աչքերը քոռացան։ Մեր սրտերից արիւն է կաթկթում։ Ամբողջ մի տարի է նստել ենք սուգ անելու։ «Գլուխդ ողջ կենայ» ենք ասում սրտներն արիւնով լեցված հայրերին, մայրերին, եղբայրներին։ Ամբողջ աշխարհը պաշել է այս բանից։ Ուրիշ ժողովուրդներ մեզ ողջութիւն առողջութիւն են մաղթում, մենք ձեզանից, կրօնի եղբայրների կողմից, սպասում ենք դեռ ի զուր մի մարդու, որ գայ և մեզ ցաւակցութիւն յայտնէ։ Ախր մահմեդական ժողովրդի սովորութեան համեմատ՝ երբ մեռնում է մէկի սիրելին, գնում են և նրան «դու ողջ եղիր» ասում և մնում նրա մօտ մի քանի օր, մինչև որ նա մի քիչ մխիթարվի։ Եւ սակայն մենք մահմեդականներից մինչև այսօր ոչ մի ոգի չը տեսանք մեզ մխիթարութեան եկող։

«Եղբայրնե՛ր, ձեզանից իւրաքանչիւրը չէ կարող գալ մեզ մօտ «դուք ողջ եղէք» ասելու։ Բայց կարող էք մեզ մխիթարել նիւթապէս օգնելով։

«Մի քիչ ջանք գործ դրէք, մի քիչ ուշադրութիւն դարձրէք մեր դրութեան։ Օգնութիւն հաւաքեցէք ձեր եղբայրների համար, ո՜վ մահմեդական եղբայրներ։ Աշխատեցէք մեզ համար. մենք ձեր կրօնի եղբայրներն ենք. մի՛ մոռանաք մեզ։ Մենք էլ ձեզ չենք մոռանայ։ Մինչև մահ ձեզ չենք հանի մեր մտքից։ Մենք այս օրերին ընկանք, յանուն կրօնի նահատակվեցինք։ Հարստահարող հայերը այս զուլումները բերին մեր գլխին։ Մեր գիւղերը վերան եղան։ Քաղաքները աւերակ դարձան։ Բացի ձեզանից, օտարահպատակ մեր եղբայրներից մեր ձեռքերը ո՛չ մի բանով, ո՛չ ոքով չեն կապված։ Մի՛ մոռանաք մեզ։ Յիշեցէք մեզ։ Ի սէր Աստուծոյ տուէք որքան կարող էք։

«Ա՜հ, մեր աչքերից հոսածը արիւն արցունք է։

«Մեզ մօտ էլ սիրտ չը մնաց։ Մեզ մօտ էլ հոգի չը մնաց։ Մեզ մօտ էլ արիւն չը մնաց։

«Նահատակվեցինք յանուն կրօնի և ազգի։ Մեր օտարերկրեայ եղբայրները մեզ օգնութեան պիտի փութա՞ն թէ ոչ։ Կամ գուցէ նրանք անտեղեակ են։

«Լացէ՛ք, մեր պապեր, մեր հայրեր, արիւն լացէք։ Արիւն հոսեցրէք ձեր այդ նուիրական աչքերից։ Ձեր որդիքը ձեր ձեռքերից գնացին։ Ձեր եղբայրները ձեր ձեռքից գնացին։ Այնքան տանջանքով մեծացրած ձեր քաջ զաւակներին մեր ձեռքերից խլեցին։ Նրանք իրանց անձը զոհեցին յանուն կրօնի։ Այժմ ձեզ պահպանողներ չը կան։ Թշուառ, գլխիկոր, վիզը ծուռ մնացիք։ Լա՛ց լինենք. լա՛ց լինենք և մեր օգնութեան ձայնը միմեանց խառնենք։ Մեր բոլորի կրծքին լեռ են քաշ արել։ Մեր բոլոր զաւակներին մեր ձեռքից խլել են։

«Արիւն լացէ՛ք, ո՜վ Կովկասի մահմեդականներ...

«Կովկասի մահմեդականների երդուեալ հաւատարմատարների պետը՝
Հիւսէյն Մոլլա-զադէ Ախունդով
«Ի դիմաց Գանձակի ներկայացուցիչների՝
«Ալեքբէր-բէկ Ախունդով
«Ի դիմաց Թիֆլիսի ներկայացուցիչների՝
«Եադիգարով
«Ի դիմաց Երևանի ներկայացուցիչների՝
«Հիւսէյն Եահեա
«Ի դիմաց Բագուի ներկայացուցիչների՝
«Ներիման-բէկ»։

Ո՞վ կարող է կարդալ այս տողերը առանց յուզմունքի։ Հայերին լաց լինելու, սգալու մէջ մեղադրող թուրքերը՝ իրանք այժմ լաց են լինում, սգում են։ Մենք ցաւի մէջ եղբայրանում ենք ահա։ Այս ցաւի ու սուգի ճիչը վաղուց է արձակել և արձակում է այժմ հայ մայրն ու հայրը։ Բայց ո՞ւմ է հարկաւոր այդ ճիչը։ Թուրքերն ասում են, թէ իրանք մեռնում են յանուն ազգի և կրօնի։ Ո՛չ, դուք մեռնում էք, մենք մեռնում ենք, շնորհիւ անգիտակցութեան, շնորհիւ բռնակալական դաւերի։

Զ.

ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է

I

Ստոլիպինի մինիստրութիւնը, ինչպէս հաղորդել էին մայրաքաղաքի թերթերը, Պետական Դուման փակելուց յետոյ պիտի աշխատի մի շարք ռեֆորմներ մտցնել երկրում, որպէսզի ապացուցի, թէ բիւրօկրատիան էլ ընդունակ և կարող է նոր կարգեր հաստատել առանց Պետական Դումայի թելադրութեան և օգնութեան։ Եւ յիրաւի, Պետական Դուման փակելուց հազիւ մի քանի օր անցած, նոյն մայրաքաղաքի թերթերը հաղորդեցին, որ լուսաւորութեան մինիստրը ժողովրդին ընդհանուր սկզբնական կրթութիւն տալու մի օրինագիծ է ներկայացրել մինիստրական խորհրդին։

Այդ օրինագծի համաձայն, ժողովրդի երկու սեռի երեխաներին էլ, նրանց ուսումնարանական տարիքին հասած շրջանում, հնարաւորութիւն պիտի տրվի սկզբնական ուսման լիակատար դասընթացքը անցնելու։ Այդ հնարաւորութիւնը տալու կամ, այլ խօսքերով, տարրական ուսումնարաններ բանալու հոգսը ընկնում է զեմստվօների և քաղաքների վրա։ Այդ տարրական ուսումնարանները պէտք է չորս տարվան դասընթացք ունենան և նրանց ծախսերի համար լուսաւորութեան մինիստրը պարտաւորվում է վճարել տարեկան իւրաքանչիւր ուսուցչի համար միմիայն 360 րուբլի, իսկ կրօնի ուսույցների համար տարեկան 60 րուբլի։ Դրանից աւելի պահանջվող բոլոր ծախսերը պէտք է տեղական միջոցներով հոգացվեն։ Տարրական ուսումնարանների կազմակերպելու, տնտեսական և այլ բոլոր գործերը վարելու հոգսերը, ըստ ներկայացված օրինագծի, թողնվում են տեղական ինքնավարութիւններին, իսկ ուսումնական և կրթական մասերի ընդհանուր վերահսկողութիւնը լուսաւորութեան մինիստրին է վերապահվում։ Ամբողջ Ռուսաստանում այդ ծրագիրը կատարելապէս իրագործելու համար տասը տարի ժամանակամիջոց է նշանակված։ Լուսաւորութեան մինիստրի կազմած սմետայի համաձայն, պետական գանձարանից այդ նպատակով 1907 թւին բաց պիտի թողնել 5,366,380 րուբլի և ապա, հետևեալ տարվանից սկսած համեմատական չափով պիտի բաց թողնել այնպիսի գումար, որ տաս տարուց յետոյ, այսինքն՝ 1917 թւականին այդ գումարը հասնի 103,366,380 րուբլու։

Սրանք են լուսաւորութեան մինիստրի ներկայացրած օրինագծի ամենաէական կէտերը։

Ինչպէս տեսնում էք, նպատակը շատ գեղեցիկ ու ժամանակակից է, իսկ ծրագիրն էլ բաւական ընդարձակ. հազիւ թէ Պետական Դուման դրանից աւելի ընդարձակ ծրագիր մշակէր ժողովրդի ընդհանուր տարրական կրթութեան համար։ Սակայն առաջին հարցը, որ ծագում է, դա դրամի խնդիրն է. որտեղից պէտք է մինիստրութիւնը և տեղական ինքնավարութիւնները դրամ գտնեն այդ տասնեակ ու հարիւրմիլիօնների ծախսերը հոգալու համար։ Անշուշտ մինիստրութիւնը նոր հարկերի մասին է երազում, մտածելով, թէ բաւական է, որ կառավարութիւնը ասէ՝ եղիցի լոյս և դրամ, և ամբողջ երկիրը կը ծածկվի ուսումնարաններով։

Բիւրօկրատիան անընդունակ է հասկանալու, որ այս բոլոր ժողովրդային շարժումներն ու խլրտումները, որ մօտ երկու տարի է ամբողջ երկիրը անհանգիստ հրաբուխի դրութեան մէջ են դրել, գլխաւորապէս արդիւնք են ժողովրդի տնտեսական քայքայման ու կատարեալ սնանկութեան։ Եթէ այդ տնտեսական քայքայումը չը լինէր, եթէ ժողովուրդը նիւթապէս ապահով և բաւականին կեանք ունենար, նա երբէք յեղափոխութեան ու բռնի միջոցների չէր դիմի բիւրօկրատիայից ազատվելու համար։

Այո՛, տգիտութեան ու խաւարի մէջ պարփակված ժողովուրդը լուսաւորութեան ու կրթութեան էլ կարիք է զգում, նա, անշուշտ, ընդհանուր, գոնէ սկզբնական ուսում էլ է պահանջում։ Բայց ամեն բանից առաջ նա պահանջում է հաց, հող, աշխատանք, որպէսզի հնարաւորութիւն ունենայ պետական ծախքերի համար պէտք եղած հարկերը վճարել։ Դրանից յետոյ ժողովուրդը պահանջում է այնպիսի կառավարչական նոր կարգեր, որ իր վճարած հարկերը նպատակայարմար և արդիւնաւոր կերպով ծախսվեն, որպէսզի հնարաւորութիւն լինի կարելի եղածին չափ խնայողութեամբ գործադրել իր՝ ժողովրդի արիւն քրտինքով վաստակած միլիօնները։

Բայց մի՞թէ բիւրօկրատիան իր ներկայ կառավարչական սիստէմով, իր այժմեան կարգ ու կանոններով, կազմուածքով կարո՞ղ է կամ ընդունա՞կ է այդպիսի խնայողութիւն անել կամ նպատակայարմար ու արդիւնաւոր կերպով ծախսել պետական գումարները։ Եթէ նա այդպիսի բան անելու ընդունակ լինէր, այն ժամանակ, ի հարկէ, շատ հեշտ կը լինէր տարրական ուսումնարանների համար ոչ թէ մի, այլ մի քանի հարիւր միլիօններ տնտեսել։ Բաւական է, որ կառավարութիւնը վերջ դնի իր անթիւ ու անհամար լրտեսների շտաբին, որոնց վրա տասնեակ միլիօններ են ծախսվում, կրճատի զինուորական բանակի թիւը, որը պետական բիւջէի կէսից աւելին է կլանում, կրճատումներ անէ բարձր բիւրօկրատիայի մինչև անտանելութեան հասցված ռոճիկները և այլն մի քանի այդ կարգի փոփոխութիւններ, և ահա Ռուսաստանը ընդունակ կը լինի ոչ միայն տարրական ընդհանուր կրթութիւն ունենալ, այլ և միջնակարգ կրթութիւն։

Բայց մի՞թէ կարող է բիւրօկրատիան այդպիսի բիւջէտային կրճատումներ անել, մի՞թէ հնարաւո՞ր է ներկայ ռեժիմի օրով այդ կարգի փոփոխութիւններ սպասել։ Ի հարկէ դա մի կատարեալ ցնորք կարող է համարվել, և ուրեմն, ցնորք կը դառնայ նոյնպէս և լուսաւորութեան մինիստրի ծրագիրը իրագործելը, որովհետև ժողովուրդը տնտեսապէս այնպիսի անելանելի դրութեան մէջ է գտնվում այժմ, որ նա աւելի շուտ ընդհանուր կրթութիւնից կը հրաժարվի, քան թէ կը համաձայնի դրա համար նոր հարկեր վճարելու։ Եւ արդեօք մինիստրութիւնը հէնց նրա համար էլ ռեֆորմները պոչից չէ՞ սկսում, որպէսզի ժողովուրդը սարսափահար լինելով, մի անգամից ձեռք վերցնի ամեն տեսակ ռեֆորմներից։

Բայց ոչ. ժողովուրդը այնչափ էլ անգիտակից չէ։ Նա շատ լաւ գիտէ, թէ ռեֆորմները ինչ կարգով պիտի սկսվեն։ Վերևում ասացինք, որ ժողովուրդը ամենից առաջ հաց և հող է պահանջում, սակայն, նա նոյնպէս շատ լաւ գիտէ, որ այդ հացը, հողը և այլ միւս բոլոր ռեֆորմները բիւրօկրատիան չէ, որ պիտի տայ երկրին, ուստի հէնց դրա համար էլ իր պահանջների ամենաառաջին տեղը նա դրել է բիւրօկրատիայի իսպառ հեռացումը քաղաքական ասպարէզից։

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Կրոնշտադի զինուորական ապստամբութեան ժամանակ կալանաւորված գլխաւոր մասնակցողների թւում գտնվում է Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկօ։ Ինչպէս ասում են, նրա մօտ գտնվել է Կրոնշտադի կարտը, որի վրա գծագրված է ապստամբների զինուորական գործողութիւնների յատակագիծը։ Օնիպկոյին զինուորական դատարանին են յանձնել։ Բացի դրանից նրա մասնակցութեան մասին քննութիւն է կատարվում։

—Կրոնշտադի զինուորական դաշտային դատարանը նիստեր է ունենում Լիւկէ ամրոցում։ Նրան մասնակցում են Կրոնշտադի նաւատորմի և զօրքերի համարեա բոլոր հրամանատարները։ Ինչպէս հաղորդում է «Пет. Газета» լրագիրը, ներկայումս մահուան են դատապարտվել արդէն 250 հոգի։ Դատավճիռը իրագործվում է անյապաղ։ Կրոնշտադից հեռացողներին ոստիկանութիւնը կանգնեցնում է և ստուգում անցագրերը։

ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

—Հելսինգֆորսում, ինչպէս հաղորդում է XX Вѣкъ-ը սկսվել է ելէքտրաքարշների, ելէքտրական կայարանների և տպարանների գործադուլը։ Առհասարակ ֆինն բանւորները վճռել են սպասողական տաքտիկայի հետևել։ Յուլիսի 21-ին յեղափոխականները օդ են պայթեցրել Սիմոլեա կայարանի մօտիկ եղած կամուրջը։

—Յուլիսի 18-ին սէյմի նիստում բոլոր դասերը մտցրել են իրանց արձանագրութիւնների մէջ հետևեալը. «Ասպետութիւն և ազնւականութիւն։ Ներկայ իրերի լուրջ դրութիւնը ի նկատի առնելով, երբ մեր գլխաւոր քաղաքում սկսվել է ռուսաց զօրքերի մէջ զինված կռիւ, դասը իր պարտքն է համարում արտայայտել իր համոզմունքը՝ որ ֆինն ժողովուրդը պէտք է շատ զգուշաբար վերաբերվի ու հեռու պահէ իրան որևէ ակտիւ միջամտութիւն անելու ռուսաց հասարակութեան մէջ այժմս կատարվող կռւից։ Ռուսաց ժողովրդի մղած կռիւը իր ազատութեան համար մեր ժողովրդի մէջ մեծ համակրանք առաջացրեց։ Բայց մենք ոչ մի իրաւունք չունենք խառնվելու այդ կռւին։ Մեր ուրոյն պայմանները ստիպում են մեզ պաշտպանել մեր անկախ ազգային զարգացումը և մեր օրինական հին ազատութիւնը, որ դրա անհրաժեշտ պայմանն է։ Անդրդուելի համոզմունք է, այն որ այդպիսով մենք միևնոյն ժամանակ կը կատարենք մեր պարտքը այն մեծ ազգի վերաբերմամբ, որի հետ մենք շաղկապված ենք»։ Միւս դասերն էլ նոյնանման արձանագրութիւն կազմեցին, բացի քաղաքացիներից, որոնք յայտնում էին ի միջի այլոց, որ իւրաքանչիւր ֆինն քաղաքացու պարտականութիւնն է ոչ միայն անձամբ չը խուսափել օրինական կարգապահութիւնից, աջակցել որ ճիշտ հայեացք պահպանվի այն պահանջների մասին, որ օրէնքը պարտաւորեցնում է իւրաքանչիւր քաղաքացու, այլև աջակցութիւն ցոյց տալ օրինական իշխանութիւններին ազգի մէջ կարգը պահպանելու ժամանակ։

—Նիւլանդի նահանգապետը այսպիսի յայտարարութիւն է տուել. «Սվէաբորգի նահանգատի հրամանատարը յայտնում է, որ, մութը ընկնելուց յետոյ, քաղաքային նաւահանգիստը լուսաւորվելու է պրօժեկտօրներով, և որ այն բոլոր նաւերը, որոնք կը շարժվեն նաւահանգստում, կը ռմբակոծվեն, որի մասին հաղորդվում է ի գիտութիւն»։

—Հելսինգֆորսում կալանաւորված են կարմիր գվարդիայից 200 հոգի։ Հանգստութիւնը դեռ ևս չէ վերականգնված։ Սպասվում են նոր ընդհարումներ։ «С. Ж.»

—Ֆինլանդական կառավարութիւնը ի դէմս սենատօրների հեռագրելով Պետերբուրգ ցաւ է յայտնել կարմիր գվարդիայի միջամտութեան համար Սվէաբորգի ապստամբութեանը։

—Ֆինլանդական երկաթուղու գնացքների կանոնաւոր երթևեկութիւնը վերականգնված է։ Բոլոր եկողներին խուզարկում են սահմանագլխի մաքսատանը։ Հսկողութիւնը խստացրված է, որպէս զի հնար չը լինի Ֆինլանդիայից զէնք տեղափոխել։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Մեզ խնդրում են տպագրել, որ Ղզախի ընտրութեան վերաբերեալ պ. Յ. Յովհաննիսեանի յօդուածում սպրդել է մի սխալ. քուէարկութեան ենթարկվել է բժ. Յ. Տէր-Միքայէլեանի հետ ոչ թէ Սամսոն Յարութիւնեանը, այլ նրա եղբայր Սարիբէգ Յարութիւնեանը։ Նախապատրաստական ժողովում որոշվում է ընտրել պ. Սամսոն Յարութիւնեանին, բայց յետոյ մի քանի իրանց դաշնակցական անուանող, գլխաւորապէս, օտարական պարոններ այնպէս են ազդում պատուիրակների վրա (իրանց սովորական միջոցներով), որ պատուիրակները տեսնում են, թէ Սամսոն Յարութիւնեանին ձայն տալը կարող է իրանց համար անախորժ հետևանքներ ունենալ, ուստի Սամսոն Յարութեանի քուէատուփը չէ դրվում, այլ դրվում է նրա եղբայր Սարիբէգինը, իբրև դաշնակցականի տուփը։

ՊԷՏՔ Է ՊԱՐԶՎԻ

Տարիներ շարունակ «Մշակը» թարգման է եղել հասարակական կարծիքի և կը մնայ էլ։ Նա իր մէջ ցոլացրել է հայ կեանքի լուսաւոր երևոյթները, նրա թարմ հոսանքները, բայց միևնոյն ժամանակ անխնայ կերպով մտրակել է մեր կեանքը հիւծող արատները, նրա վնասակար ու տգեղ կողմերը։ Նրա շուրջն է համախմբվել, կռվել ու կոփվել ռուսահայերի ազատամիտ կուսակցութիւնը, նրա մէջ են արտայայտել իրանց մտքի ու հոգու թափը առաջադէմ խիզախ ույժերը։ Աշխատաւոր գիւղացին թէ արհեստաւորը, հարստահարվողը թէ թոյլը «Մշակի» մէջ է որոնել իր պաշտպանութիւնը և նա չէ հիասթափվել։

Ժխտել այդ բոլորը կարող են միայն կրքից կուրացածները։

Եւ եթէ վերջին տարիներս մեր կեանքը իր առաջադիմական ուղղութեամբ անկարող է եղել որևէ նոր հարց, կեանքի նոր խնդիր զարթեցնել ու մշակ՛ել, նոր հոսանք մտցնել հասարակական կեանքի մէջ, դրա պատճառները եղել են Ռուսաստանի քաղաքական այն պայմանները, որոնք անհնարին էին դարձնում կուլտուրական նորմալ զարգացումը։

Բացի այդ մեր դժբախտ կեանքը դատապարտված է արեան, գնդակների ու հրդեհումների ասպարէզ դառնալ։ Երիտասարդութիւնը կուլ գնաց ազգային ընդհանուր աղէտի դէմ մաքառողական կռւին. ինքնապաշտպանութեան խմբերի մէջ էր գործում հայ երիտասարդութիւնը, առանց դասակարգային խտրութիւնների և ամեն մի հայ մարդ, ունեւոր թէ աղքատ, լուսաւորչական թէ կաթօլիկ, նուիրաբերում էր իր լուման ազգային ինքնապաշտպանութեան գործին—նրա ղեկավար մարմնին։ Այդ ղեկավար մարմինը Դաշնակցութիւնն էր, որ վայելում էր հայութեան խոշոր մասի վստահութիւնն ու համակրանքը։

Սակայն զուտ յեղափոխական գործունէութիւնը թողած Դաշնակցութեան նորագոյն շէֆերը այսօր ամբողջ թափով նետվում են հասարակական ասպարէզի մէջ, իրանց ռազմական ույժերով քրքրելու ու լուծելու ժողովրդական կեանքի ամեն մի նոր թէ հին հարց, լուրջ ու կարևոր խնդիր, իրանց տեսակէտներով, առանց ըմբռնելու այն տարրական ճշմարտութիւնը, որ հասարակական խաղաղ կուլտուրական ասպարէզում ու գործունէութեան համար անհրաժեշտը մտաւոր պատրաստականութիւնն է, այլ ոչ յեղափոխական շառաչիւնը, որ տխուր հետևանքների հասցրեց։

Կը մոռանա՞յ հայ ժողովուրդը այն դատաստանական գործունէութիւնն ու բռնութիւնները, որ վարագուրվում են Դաշնակցութեան դրօշի տակ։

Ժողովուրդը չէ կարողանում այլևս համբերել, և նա, իր գիտակից տարրերի բերանով, բողոքում է անարդարութեան դէմ ըմբոստ ձայնով։

Ինչո՞ւ.—Որովհետև ձեր շուրջը մի հրապարակական քաոս է ստեղծվել, որից դուք անկարող էք դուրս գալ ու ըմբռնել կեանքի մէջ կատարվող փոփոխութիւնները, ուշք ուշով ականջ դնել ժողովրդի խուլ դժգոհութիւններին և շարունակում էք ապրել ինքնախաբէութեան օրօրներով։

«Մշակը» չէ կարող անտարբեր հանդիսատես մնալ բողոքի արտայայտութիւններին ու բարձրացրել է իր ձայնը։

Փոխանակ ուշքի գալու, ուշադրութիւն դարձնելու այդ բողոքներին ու ուղղելու ակներև սխալները, «Ալիքը» փփրած «նիզակներ ճոճելու» մասին է խօսում։

«Մշակը» վերարտադրելով իր էջերում հայ ժողովրդի սաստկացող դժգոհութիւնը կատարվող մի շարք բիրթ, անպատուաբեր արարքների համար, պարտք է համարում քննադատել նրան, ով մեղսակից է և պատասխանատու այդ բոլորի համար։

«Ալիքն» ասում են նախ՝ որ ազգային ինքնապաշտպանութեան կազմակերպութիւնը հետզհետէ նպատակակէտից շեղվում է, հարկաւոր է պարզել. հին գործունէութեան ճանապա՞րհն է ընտրում թէ՞ նորը։

Երկրորդ, որ նրա ներկայ գործակալները շատ տգեղ դեր են խաղում, բռնաբարելով ժողովրդի ազատ կամքը և միջամտելով հասարակական բոլոր գործերին, որ ժամանակ է վերջապէս վերջ տալ այդ ստահակութիւններին։

Այդ հարցերի դէմ փոխանակ էական առարկութիւններ անելու, լուրջ պատասխաններ տալու, «Ալիքը», մի քանի սիւնակներում հայհոյելով «Մշակի» խմբագրութեան անդամներին, ծամածռութիւններով է զբաղվում։

Բայց, պարոններ, մաքրութիւն ուսէք նախ և ապա միայն ճառեցէք գրական էտիկայի նշանակութեան մասին։ Դուք անպարկեշտութեամբ ինչ որ պալացցօների պահպանութեան մասին էք խօսում. և մի՞թէ այդ իրաւունք է տալիս թագցնելու ձեր արատները։ Ինքնապաշտպանութիւնը պէտք է լինի անարատ, անշահասէր, առանց յետին նպատակների ու մտքերի. դրա առաջ մենք խոնարհվել ենք ու կը խոնարհվենք։

«Մշակը» իր մի շարք յօդուածներում գաղափարական հարցեր է դնում ձեր առաջ, որին դուք պատասխանում էք հայհոյանքներով։ Դրանք ձեր ճաշակի նմուշներն են։ Սակայն մի այդպիսի վերաբերմունք չէ կարող հարցերը թողնել անորոշութեան մէջ։ Այդ հարցերը կարևոր, գաղափարական նշանակութիւն ունեն, որոնց լուծմանը սպասում է հասարակութիւնը անհամբեր։ Անհրաժեշտ է, որ այդ հարցերը պարզվեն։ Անհրաժեշտ է, որ ամեն մի հայ հասկանայ նախապէս, թէ ո՞ւր է տանում ձեր այդքան եռանդուն ղեկավարութիւնը։

Լ. Դանիէլ

Ի՞ՆՉ ԿԸ ԼԻՆԻ ՍՐԱՆԻՑ ՅԵՏՈՅ

Պետական Դուման այլևս գոյութիւն չունի. բայց ի՞նչ պիտի լինի սրանից յետոյ։ Ահա մի հարց, որ կօշմարի նման ճնշում է ամեն մէկի միտքը։ Եւ իսկապէս՝ ի՞նչ կը լինի առանց Դումայի, որից միլիօնաւոր տանջված ու յոգնած ժողովուրդը տեղի թէ անտեղի դեղ ու դարման էր սպասում իր անթիւ ցաւերին և ենթադրում էր, թէ նա վերջապէս խաղաղ նաւահանգիստ պիտի դուրս բերէ իրան և պիտի ազատէ անվերջ ու միշտ սպառնող փոթորիկներից։ Պաշտօնական նաւավարը մեռաւ նախքան ժողովուրդը նաւահանգիստ դուրս գալը, բայց մի՞թէ դա ապացոյց է, թէ նա պիտի խեղդվի փոթորկում։

Մեր անցեալ «Ի՞նչ տուեց Պետական Դուման» յօդուածում այն միտքն էինք արտայայտել, որ իսկապէս Դուման, շնորհիւ այն կաշկանդիչ պայմանների ու հանգամանքների, որոնց մէջ նրան դրել էր բիւրօկրատական կառավարութիւնը, իսկի չէր էլ կարող խաղաղ ճանապարհով վերջ դնել այն կատաղի պատերազմին, որ սկսվել է բիւրօկրատիայի և ժողովրդի միջև։ Իբրև օրէնսդրական մարմին նա անկարող եղաւ մի որ և է արդիւնաւոր գործ կատարել և չը պիտի էլ կարողանար կատարել, եթէ մի քանի ամիս ևս նա շարունակէր իր նիստերը։ Եւ հէնց այդ պատճառով էլ ասել էինք, որ Պետական Դումայի վրա մենք նայում էինք ոչ թէ իբրև օրէնսդիր մարմնի վրայ, այլ պարզապէս իբրև մի ազատ ամբիոն, որտեղից ամենայն ազատութեամբ ու համարձակութեամբ մերկացնում էին կառավարութեան բոլոր խարդաւանանքներն ու ապօրինութիւնները և իրանց ճառերով յեղափոխականացնում ժողովրդի բոլոր խաւերը։

Պետական Դուման, այդպէս յեղափոխականացնելով ժողովուրդը, բոլորովին չէր ցանկանում սակայն (գոնէ նրա մեծամասնութիւնը) ժողովրդին յեղափոխութեան և բացարձակ ապստամբութեան հրաւիրելու։ Ընդհակառակը, նա ցանկանում և ամեն կերպ աշխատում էր խաղաղարար միջնորդի դեր կատարել բիւրօկրատիայի և ժողովրդի միջև. նա շարունակ ճիգեր էր թափում մի կողմից՝ կառավարութիւնից զիջումներ կորզելու, իսկ միւս կողմից՝ յեղափոխութիւնը կանգնեցնելու, նրան «զինաթափ» անելու, ինչպէս ասաց Դումայի անդամներից մէկը։

Իսկապէս մի տարօրինակ դրութիւն էր ստեղծվել Դումայի համար. իր արած հարցապնդումների, իր պատրաստած օրէնսդրական նախագծերի և իր արտասանած ճառերի ազդեցութեան տակ գիտակցութեան հասած, խրախուսված և բացարձակ կռւի դուրս գալու տրամադրված ժողովրդին նա միշտ կանգնեցնում էր և յոյսեր ներշնչում, թէ բացարձակ պատերազմելու ոչ մի կարիք չը կայ, թէ կառավարութիւնը շուտով կարևոր զիջումներ պիտի անէ և ամեն ինչ խաղաղութեամբ կը վերջանայ։ Այլ խօսքերով՝ Դուման մի կողմից ժողովրդի աչքերը բանում ու նրան կռւի էր պատրաստում, իսկ միւս կողմից՝ նա ամուր բռնում էր ժողովրդի բարձրացրած «ջղուտ բռունցքը»։

Շատ պարզ և հասկանալի է, որ Պետ. Դումայի այդ ընթացքը և խաղաղութեամբ, առանց արիւնհեղութեան ու առանց մարդկային զոհերի կառավարութիւնից զիջումներ ստանալու հաւաստիացումները շատ աւելի գրաւիչ պիտի լինէին և էին ժողովրդի, նամանաւանդ նրա քաղաքականապէս մեծ գիտակցութեան չը հասած խաւերի համար, քան այն յեղափոխական կազմակերպութիւնների քարոզները, որոնք պնդում էին, թէ Ռուսաստանի յեղափոխութիւնը դեռ վերջացած չէ կարելի համարել, մինչև որ բիւրօկրատիան մի լաւ պարտութիւն չը կրէ, ուստի և անհնարին է սպասել և յուսալ, թէ կառավարութիւնը կը համաձայնի կարևոր զիջումներ անել և գոհացում տալ Պետական Դումայի բոլոր պահանջներին։ Եւ ամեն բան ճիշտ, դիւրին ճանապարհով ստանալու շլացուցիչ հանգամանքի շնորհիւ նոյն իսկ յեղափոխականացած և կռւելու տրամադրութեան հասած ժողովրդի մեծամասնութիւնը երես էր դարձնում յեղափոխական կազմակերպութիւններից և աւելի մեծ սիրով Պետական Դումայի հետ էր կապվում, ամենայն ուշադրութեամբ նրա գործունէութեանն էր հետևում և ակնապիշ նրանից փրկութիւն սպասում։

Այս բոլորը այդպէս լինելուց յետոյ, այլ ևս դժուար չէ, կարծում ենք, պատասխանել այն հարցին, թէ ի՞նչ կը լինի սրանից յետոյ։

Պետական Դումա չը կայ, կը նշանակէ՝ չը կայ այլ ևս այն զուր յոյսը, թէ կառավարութիւնը այսօր կամ վաղը զիջումներ պիտի անէ և ամեն ինչ խաղաղութեամբ պիտի վերջանայ։ Պետական Դուման չը կայ, կը նշանակէ՝ չը կայ այլ ևս և այն մարմինը, որը զանազան հաւաստիացումներով շարունակ բռնում ու կանգնեցնում էր օդի մէջ բարձրացած ժողովրդային ջղուտ բռունցքը։

Պետական Դուման չը կայ, կը նշանակէ՝ չը կայ այլ ևս և այն պատուարը, որը կանգնել էր դժգոհ ու յեղափոխականացած ժողովրդի և յեղափոխական կազմակերպութիւնների միջև։ Այդ կը նշանակէ, որ Դումայից խաղաղ ճանապարհով իր փրկութիւնը ձեռք բերելուց յուսահատված ժողովուրդը այլ ևս ոչ միայն հեռու կը մնայ ու երես չի դարձնի այդ կազմակերպութիւններից, այլ, ընդհակառակը, նա այսուհետև աւելի մեծ հաւատով կը վերաբերվի դէպի նրանց և աւելի արագութեամբ կը կազմակերպվի նրանց դրօշակների տակ։

Ահա հէնց այդ միայն կարող է լինել սրանից յետոյ։

Ռուսաստանում ազատագրական շարժումները երբ որ սկսեցին, Պետական Դումա չէր, որ ժողովուրդը պահանջում էր։ Նա պահանջում էր սահմանադիր ժողով՝ ընտրված քառանդամ ֆորմուլայով։ Բայց, հէնց այդ ժողովրդային պահանջից խուսափելու և հետզհետէ սպառնական դարձող շարժումների առաջը մի պատնէշ կանգնեցնելու համար, ինքը կառավարութիւնը Պետական Դուման յօրինեց ու նրան հրաւիրեց։ Իսկ այսօր նոյն ինքը կառավարութիւնն էլ իր ձեռքով շինած պատնէշը քանդեց և այդպիսով դարձեալ ազատ ասպարէզ բացեց յեղափոխութեան առաջ, թոյլ տալով, որ նա, երկու և կէս ամիս կանգ առնելուց ու շեղումներ կատարելուց յետոյ, դարձեալ խրոխտաբար իր բնական ճանապարհով ընթանայ։ Ճիշտ այդ է Դուման փակելու իմաստը, և մենք զարմանում ենք, որ կառավարութիւնը այդ բանը չէ հասկանում։

Բայց ոչ. այն խստութիւններն ու ռեպրեսիաները, որ նա ձեռք առաւ Դուման փակելուց անմիջապէս յետոյ, փառաւոր ապացոյցներ են, որ նա այնչափ էլ տգէտ չէ ու շատ լաւ է հասկանում իր արած քայլից առաջանալիք վտանգները. բայց նա, գլուխը կորցրած, ինքն էլ չէ հասկանում, թէ ինչ է անում։ Նա այժմ ճիշտ այն հիւանդի դրութեան մէջ է ընկել, որը, հասկանալով իր հիւանդութեան մահացու լինելը, այլևս ոչ մի դիէտա չէ ուզում պահել, ասելով՝ միևնոյն է, ուտեմ էլ պիտի մեռնեմ, չուտեմ էլ պիտի մեռնեմ, աւելի լաւ է ուտեմ և այնպէս կը մեռնեմ։

Խ.-Ազատ

ԽԱՂԱՂ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

Վիբորգի խորհրդակցութեան դիմումին չը ստորագրող Պետական Դումայի անդամներ կոմս Հէյդէնը, Ստախովիչը և Լվօվը «Խաղաղ վերանորոգութեան» կուսակցութեան անունից մի նամակով դիմում են իրանց ընտրողներին։ Արտատպում ենք այդ նամակ «Нов. Время» լրագրից.

«Կառավարիչ սենատին տուած ուկազով Պետական Դուման արձակվում է։ Մենք, նրա նախկին անդամներս, պարտաւոր ենք յայտնելու, որ նախ և առաջ անպայման կերպով հնազանդվում ենք Թագաւոր Կայսրի Բարձրագոյն կամքին։ Հիմնական օրէնքների 105-դ յօդ. զօրութեամբ, անկասկած Թագաւորին է պատկանում Դուման արձակելու իրաւունքը։ Մենք մեզ պարտաւոր ենք համարում հնազանդվել ոչ միայն հպատակութեան պարտականութիւնից դրդված, այլ և այն խոր համոզմունքից ու գիտակցութիւնից, որ Ռուսաստանի ներկայ վտանգաւոր կացութեան ու խռովութեան ժամանակ յանցանք կը լինէր խախտել Թագաւորի իշխանութիւնը։

«Մենք մեր խղճի խորին համոզմամբ գիտակցում ենք, որ երբ մենք Պետական Դումայում պաշտպանում էինք գիւղացիական հողատիրութեան չափերը աւելացնելու, ամենքի համար հաւասար իրաւունքներ ձեռք բերելու բոլոր ազատութիւնների մէջ և օրէնքի առաջ, մենք դրանով ձգտում էինք արդարացնել մեր վրա դրված լիազօրութիւնները։

«Բայց իշխանութեան ղեկավար մինիստրութիւնների կողմից մենք հանդիպեցինք ոչ թէ աջակցութեան, այլ ընդդիմութեան, որ մեզ հրեց պայքարի մէջ մտնել նրանց հետ, որոնց հետ միահամուռ աշխատակցութիւնը այլևս անհնարին եղաւ։

«Թագաւորը բարեհաճեց փոխել մինիստրութիւնը և նոր ընտրութիւնների միջոցով Դումայի նոր կազմ ստեղծելով ստուգել մեր յայտարարութեան համապատասխան լինելը ժողովրդի իրական ցանկութիւններին։ Դումայի գումարումը նշանակված է փետրվարի 20-ին։ Յուլիսի 9-ի մանիֆեստով Թագաւորը մի անգամ էլ հաստատեց, որ սահմանադրական կարգը պահպանվում է Ռուսական Միապետութեան մէջ, որ ժողովրդական ներկայացուցիչները կը հրաւիրվեն և նրանց իրաւունքները ոչ մի կերպ չեն նսեմանայ։

«Այդ պատճառով մեր առաջին խօսքը, որի վրա էր յենվում ժողովրդական վստահութիւնը, մեր առաջին խօսքը ուղղված բոլոր ընտրողներին, այն է՝ որ մենք սրանով կոչ ենք անում հանգիստ մնալ ու արգելք դառնալ բռնութիւններին։ Միայն եռանդուն կերպով նախապատրաստվելով նոր ընտրութիւնների համար և գիտակցաբար իրագործելով նրանց կարող է ժողովուրդը ապացուցանել, որ նա թանկ է գնահատում իր ներկայացուցչութեան իրաւունքը կառավարութեան և օրէնքներ ստեղծելու գործի մասնակցութեան մէջ։

«Ապագայ ընտրութիւններին պէտք է ուղղված լինի ռուսաց ժողովրդի ջանքերը, իսկ նրա կարիքները կարտայայտեն նրանք, որոնց որ նա գիտակցաբար կընտրէ։ Ամեն տեսակ բռնութիւններ, անկարգութիւններ և օրինազանցութիւններ մենք համարում ենք ոչ միայն յանցանք, այլ և ներկայ խռովայոյզ օրերում ուղղակի անմտութիւն։

«Նրանք ոչ միայն կը դրդեն խիստ միջոցներ ձեռք առնել կառավարութեանը, որ հարկադրված է ույժով պահպանել, ինչպէս ուզում է լինի, տէրութեան ամբողջութիւնը և քաղաքացիների ապահովութիւնը. նրանք ոչ միայն պատճառ կը լինեն բազմաթիւ զոհերի և ապարդիւն կորուստների. արիւնհեղութիւն կառաջացնեն և Ռուսաստանում կը ստեղծեն անտանելի մի յանցանք, բայց նրանք կը մատնեն ույժասպառ եղած և քայքայված Ռուսաստանը—մեր սուրբ հայրենիքը—վերջնական քայքայման, անկման ու կորստի։

«Երկիւղ կրելով դրանից ապագայում, գիտակցելով անցեալում մեր արդար լինելը Թագաւորի և ժողովրդի առաջ, մենք, նախկին ժողովրդական ընտրեալներս, հրաւէր ենք կարդում նրանց, որոնք մեզ, հաւատում էին և ձայն տալով. ընտրեցին մեզ խաղաղ կերպով հնազանդվելու Ցարի օրինական կամքին և շարունակելու խաղաղ ու յամառ աշխատանքը ռուսաց ժողովրդի կարիքները և ազատութիւնը պաշտպանելու համար։

«Լիազօրներ՝ կոմս Հէյդէն, Լվօվ, Ստախովիչ»։

ՄՈՌԱՑՎԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

V

Շրջելով Դարաչիչագի շրջանի մի քանի գիւղերը, մեզ համար օտարոտի չէին տնտեսական և կենցաղի այն հակադրութիւնները, որոնք գալիս ցցվում էին մեր առաջ իւրաքանչիւր քայլափոխում։ Մի գիւղ օգտվում է անհամեմատ ընդարձակ հողաբաժիններով քան միւսը, մի գիւղ հնարաւորութիւն ունի աւելի թւով կենդանիներ ունենալու, քան իր հարևան գիւղը և բնականաբար մի գիւղ կարողացել է ընդհանուր դրութիւնից աւելի լաւ վիճակ ստեղծել, մինչդեռ նրան կից մի այլ գիւղ գտնվում է դառն չքաւորութեան մէջ։ Այսպէս էլ պէտք է լինէր, քանի որ տիրող կարգերն ու օրէնքները ձգտել են միմիայն այս ուղղութեամբ։ Հողերի անհաւասար բաշխումբ ազգաբնակութեան տեսակների մէջ, ինչպէս մենք տեսանք նախորդ յօդուածում, նոյնպիսի անհաւասար հողաբաժանումը առաջացել է նոյն տեսակի ազգաբնակութեան խմբակների կամ գիւղերի մէջ:

Դարաչիչագի շրջանում, ինչպէս մենք տեսանք, իւրաքանչիւր հայ ծուխի միջին թուով գալիս է 11½ դես. հող, որից վարելահող միայն 5¼ դես.: Մինչդեռ Սօլակ գիւղում, որը ունի 210 ծուխ և 3,470 դես. հող, իւրաքանչիւր ծխին գալիս է 16½ դես., որից 5 դես. վարելահող. Թայչարուխ գիւղում, որը ունի 107 ծուխ և 2,470 դես. հող, ծխին գալիս է 23 դես., որից 6 դես. վարելահող, իսկ Թեղխաբ գիւղում, որը ունի 57 ծուխ և 1,357 դես. հող, ծխին գալիս է 24 դես., որից 10¼ դես. վարելահող: Այն ինչ մի շարք գիւղեր էլ բոլորովին զուրկ են համաչափ հողաբաժիններից: Այսպէս Զրուչա գիւղն ունի 111 ծուխ և 807 դես., Մաքրավանքը՝ 135 ծուխ և 917 դես. հող, իսկ Փառուզը միմիայն 126 ծուխ և 778 դես. հող. այնպէս որ իւրաքանչիւր ծուխի Զրուչա գիւղում գալիս է 7¼ դես., Մաքրավանքում՝ 6¾ դես., իսկ Փառուզում՝ միմիայն 6¼ դես. առանձին վարելահողերը վերցրած իւրաքանչիւր ծխին գալիս է Զրուչում 4½ դես., Փառուզում 4¼ դես., իսկ Մաքրավանքում միմիայն 3¼ դեսեատին:

Ահա ձեզ հակադրութիւններ. Թայչարուխցի մի ծուխը ունի 23 դես, իսկ Փառուզցին միմիայն 6¼ դես., չորս անգամ պակաս հողաբաժին:

Այսպիսի համեմատութիւն անելով, ի հարկէ, մենք չենք ասում, որ եթէ հողերը բաժանուէին համաչափ կերպով բոլորի մէջ, դրութիւնը կը լաւանար և տնտեսական քայքայուած վիճակը կը բարւոքուէր. ոչ մենք չլշտեցինք իր տեղում, որ Դարաչիչագի շրջանում հողը ընդհանրապէս քիչ է, նա բաւարարութիւն չէ տալիս ազգաբնակութեան անհրաժեշտ կարիքներին, այլ մեր նպատակն էր մատնացոյց լինել, որ հողերի անհամաչափ բաշխման շնորհիւ առանձին, այն էլ սակաւահող և տնտեսապէս քայքայուած այդ շրջանում խեղճութիւնը մի քանի աստիճան աւելի և առաջ է գնացել, որը առանձնապէս ծանրացել է չքաւոր դասի վրայ:

Հողերի քանակութեան հետ կապուած է անասնապահութիւնը գիւղերում. որքան մի գիւղ աւելի մեծ հողաբաժիններ ունենայ, այնքան նա աւելի հնարաւորութիւն կունենայ կենդանիներ պահել, շահել. որքան քիչ լինի մի գիւղի հողը, այնքան նա զրկուած կը լինի կենդանիներ կերակրելու հնարաւորութիւնից: Այս տեսակէտից Դարաչիչագի շրջանում մոլոկանները անհամեմատ աւելի շատ կովեր, եզներ ու ձիեր են պահում, քան հայերը, և անհամեմատ աւելի շահւում անասնապահութիւնից, քան հայերը, թէև վերջինները պահում են նաև ոչխարներ, որի փասը օգուտից զրկւում է, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ:

Կան արդեօք Դարաչիչագի շրջանում ազատ հողեր, որոնցից կարելի լինէր յատկացնել կարօտ ազգաբնակութեանը, հնարաւորութիւն տալով նրան ապրուստ հայթայթել: Ի հարկէ, կան և շատ կան:

Երևանի նահանգում պետական արօտատեղիներ անուան տակ կայ 607,152 դեսեատին տարածութիւն, որը կազմում է նահանգի քառորդ մակերևոյթը: Արօտատեղիները բաժանուած են 21 շրջանների, որոնցից ամենամեծագոյնը—Ագմաղանի արօտատեղին—ընկած է Երևանի և Նոր-Բայազէտի գաւառների սահմանի վրայ: Այդ արօտատեղին ունի 45,001 դես. տարածութիւն, որից 34,501 դես. պատկանում է Նոր-Բայազէտի գաւառին, կազմելով Դարաչիչագի գաւառամասի շարունակութիւնը: Ահա այդ արօտատեղիների վրայ չվում գալիս են թափառական քուրդ և թուրք ցեղեր, յաճախ շատ հեռու տեղերից, իրանց հօտերով, որոնք ոչ միայն օգտւում են այդ արօտատեղիներից, այլ և իրանց ասպատակութիւններով և անհանգիստ կեցուածքով սարսափի տակ են պահում շրջակայ խաղաղ աշխատանքի սովոր ազգաբնակութեանը, շատ անգամ, յարձակւելով և քշելով վերջինների տաւարի և ոչխարի հօտերը:

Այդ արօտատեղիներից օգտւելու համար այնքան դիւրութիւն չէ տրւում տեղական երկրագործ ժողովրդին, որքան թափառական քուրդ ցեղերին. վերջինները օգտւում են արօտատեղիներից արտօնեալ պակաս սակագնով, և այդ պատճառաբանւում է քուրդ ցեղերի խաշնարած զբաղմունքով, որպէս ապրուստի միակ աղբիւր:

Բացի յիշեալ արօտատեղիները, որոնք շատ մեծ չափով կարող էին այս շրջանի հողազուրկ գիւղացիութեան տնտեսական դրութիւնը բարւոքել, եթէ դրվէին նրա տրամադրութեան տակ, Դարաչիչագի շրջանը հարուստ է նաև անտառներով, սակայն որոնցից տեղական ազգաբնակութիւնը մազաչափ անգամ չէ օգտւում, եթէ չը հաշւենք գողունի օգտւելը, որի պատճառով էլ մի քանի գիւղեր վճարում են բաւականաչափ տուգանքներ, աւելի շատ, քան օգտւում են:

Այդ անտառները բաժանուած են երկու մասերի. առաջինը՝ Դարաչիչագի անտառը 2540 դեսեատին տարածութեամբ և երկրորդը՝ Միսխանայի անտառ՝ 15,664 դես. տարածութեամբ, երկուսը միասին 18,204 դես., որից սակայն 6,367 դես. միայն համարւում է շահագործութեան պիտանի:

Միթէ բնութեան տուած այդ հարստութեան անտառներին կից խեղճ ու կրակ գիւղացին չը պիտի կարողանայ օգտւել նրանից գոնէ այն չափով, ինչ չափով պահանջւում է այդ նրա տնտեսքը:

Ահա խնդիրներ, որոնք պահանջում են շտապոյթ լուծում, առանց որի այս շրջանի ժողովրդի դրութիւնը գնալով դառնել է աւելի անտանելի:

Օնիկ

ՖԻՆԼԱՆԴԻԱ

(Տպաւորութիւն)

I

Ահա մի յաւատանոյ ժողովուրդ ևս:

Ահա մի երկիր ևս, որ ոչ հեռաւոր անցեալում ասպարէզ էր ռուս կառավարութեան արտադրած՝ անօրէնութեան և բռնակալութեան յանդուգն ասպետների աշխատանքների համար: Ինչպէս յայտնի է, հարիւր տարուց աւելի Ֆինլանդիան վայելում էր ազատ կարգեր, ինքնավարութիւն, և ազգաբնակութիւնը ապրում էր բարեկամական յարաբերութիւններով ռուս ժողովրդի հետ, բայց նախորդ դարիս վերջերին, երբ ռուսացման քաղաքականութիւնը ուժեղացաւ կայսրութեան այլ և այլ ծայրերում՝ Կովկասում, Լեհաստանում, Արևմտեան նահանգներում, այս խաղաղասէր, կենցաղակիրթ անկիւնն ևս ենթարկուեց կառավարչական կիսաքաղցած աստիճանաւորների բարեհայեցողութեան. կարճ ժամանակի ընթացքում ոչնչացրին և վերացրին Ֆինլանդական սահմանադրութիւնը, ֆիննական զօրքերը, ցրեցին և նրանց փոխարինեցին Ռուսաստանից տեղափոխած ահագին զօրաբանակները, ամենուրեք մտցրին ժողովրդին անծանօթ ռուսաց լեզուն, մտցրին ռուսական հաստատութիւններ իրանց անբաժան գործակից ոստիկանների ու լրտեսների շտաթով: Եւ այս րօպէից իսկ սկսուեցին Ֆինլանդիայի նուաճումը ու աւերումը: Բնական է, մի ժողովուրդ, որ սովոր էր ապրել իր սեփհական օրէնքների և ազատ հաստատութիւնների հովանու ներքոյ, չէր կարող տարբեր նայել, երբ նրա հայրենիքը մատնուել էր գեներալ-նահանգապետների ոչնչացուցիչ հրահանգներին, և սկսուեցին դժգոհութիւն, յուզմունքներ, որ քանի գնում, սաստկանում էին, քաղաքական սպանութիւններ, յարձակումներ ատելութիւնն ու զայրոյթն այն աստիճան սաստկացան, որ սկսուեց մշակուել ապստամբութեան ծրագիր, և մեծամասնութիւնը հակուած էր Շվեցիային միանալու: Տխրահռչակ Բոբրիկովը եռանդուն միջոցներով գերազանցեց իր նախորդներին, այնուհետև ամբողջ Ֆինլանդիայում չը մնաց մի ֆինն, որի երբեմն երախտագէտ սիրտը այժմ չայրուէր վրիժառութեան անհողով, նմանելով հրեղէն լեզուի, պատրաստ կլանելու ամենայն ինչ, որ կրում է ռուսական դրօշը: Վերջապէս որոտաց տանջուած ժողովրդի դատաստանի ահարկու ձայնը և նրա լացով, անէծքով ու արիւնով լցուած գնդակները յաւիտենականութեան գիրկը նետեցին կառավարութեան ներկայացուցչին, խլելով ժողովրդից մի հարազատ զաւակ ևս՝ «կեցցէ ազատութիւն» մրմունջը շրթունքին:

Սկսուեց հոկտեմբերեան յեղափոխութիւնը: Որոտաց Ռուսաստանը, գղրդաց Կովկասը, որոտացին Լեհաստանն ու Արևմտեան նահանգները. համեմատաբար խաղաղ էր Ֆինլանդիան, չը նայելով ընդհանուր գործադուլին, որ յայտարարուած էր և աջողութեամբ իրագործւում էր այստեղ: Ամենուրեք կոտորածներ, ջարդեր, կողոպուտ, լաց, անէծք, գործադուլ, անիշխանականութիւն, զինւորական դրութիւն, կախաղան... «Իսկական ռուս մարդկանց» տենչերն այս երկիրն ևս խեղդել հակայեղափոխութեան ալիքների հեղեղում և դարձնել նրան մի իրաւազուրկ պրովինցիա, զրկուեցան հպարտ, ազատասէր ֆինների պատրաստ միահամուռ դիմադրութեան և ողջ ցնցուեցան: Այն ժամանակ գահոյքի բարձրից դատապարտուեց Պլեվէ-Բոբրիկեան քաղաքականութիւնը և Ֆինլանդական Մեծ-Իշխանութեան վերադարձուեցան նրա հիմնական օրէնքները, սահմանադրութիւնը: Կամայականութեան, բռնութեան և խաբեբայութեան օրերն անցան գնացին աւանդութեան գիրկը և այսօր ֆինն ժողովուրդը վայելում է խօսքի, անհատի, խղճի, իրաւունքի և գոյքի ազատութիւն:

Ոչ մի օրէնք չէ հրատարակւում առանց փոխադարձ համաձայնութեան Նորին Բարձրութեան և Ֆինլանդիայի ժողովրդական ներկայացուցիչների: Մայիսի 15-ին հորիզոնը կրկին շառագունեց և երկրի ազգաբնակութիւնը ստացաւ ազատ, լայն ռամկավարական սկզբունքների վրայ հիմնուած ընտրողական իրաւունքը:

Մի նոր յաղթանակ ևս, մի նոր գրաւական ևս՝ ժողովրդի բարգաւաճման:

Ուսանող՝ Ցոլակ Ղուկասեան

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէօդոսիա, յուլիսի 20-ին

Ի սէր ճշմարտութեան՝ խոնարհաբար խնդրում եմ տպագրել հետևեալը

Որովհետև Քիշնևի հայոց կօնսիստորիայի նախագահ Բենիկ վարդապետ միայնակ «Մշակի» 133-րդ համարում, իսկ Սարգիս և Բարսեղ քահանաների և տէր Կ. Յովհաննէսեանի հետ «Հովիւ» շաբաթաթերթի № 21-րդում, 18 յօդ. լիաբերան լուտանքների մի սև կոյտ ծածկելով ուղղել էին իմ հասցէին՝ համարելով ինձ որպէս հասարակական փողեր իւրացնող և ծանր յանցանքների ենթակայ, ուստի՝ սրանով յայտնում եմ ի գիտութիւն ինձ զրպարտող վարդապետ Բենիկին, Սարգիս քահանայ Թաթիկեանին, Բարսեղ քահանայ Ղազանճեանին, որ այսօրվանից նրանց պատրաստած 18 զրպարտութիւնները թարգմանեցի յանձնելով Սիմֆերօպոլի նահանգական դատարանի պ. դատախազին քրէական օրինաց 1535-դ յօդուածի հիման վրայ պատասխանատուութեան ենթարկելու յիշեալ զրպարտիչ անձանց:

Իմ վերաբերմամբ քննութիւնը կատարուած է և վերջացած: Ամօթից և խղճից զուրկ թշնամիներիս ոչ թէ 18, այլ նոյն իսկ 24 շինծու և միմիայն թքանքի արժանի զրպարտութիւնները՝ մնացին զրպարտութիւն: Սպասում ենք, թէ ինչպէս Բենիկ վարդապետը իմ վերաբերմամբ կազմելի գրքոյկը իր վզից կախած դատաստանական ատեան պիտի գայ և ապացուցանէ իմ Հերթեցեանիս բացասական արժանիքները, որի ասիթով չը գիտենք ինչու այսքան ժամանակ Քիշնևի կօնսիստորիան լռութիւն էր պահպանում:

Ներսէս քահանայ Հերթեցեան

—

Թիֆլիս, յուլիսի 26-ին

Կիրակի, ամսիս 23-ին, Զգրաշէնի եկեղեցում չը կայացաւ պատուիրակների ընտրութիւնը, սակայն ժողովականների մէջ տեղի ունեցաւ զանազան հարցերի մասին մտքերի փոխանակութիւն, որի մասին հարկ եմ համարում մի քանի խօսք ասել:

Երկար վիճաբանութեան առիթ տուեց ի միջի այլոց հետևեալ հարցը՝ տալ ձայնատուութեան իրաւունք ոչ-ծխականներին, թէ ոչ: Այս հարցը դնողները միևնոյն ժամանակ նրա պաշտպանողներն էին և պաշտպանում էին այն տեսակէտից, որ գործը ընդհանրութեան վերաբերելով, ամենայն իրաւամբ իրաւունք ունեն մասնակցելու ընտրութիւններին բոլոր բանւորները, որոնց թիւը մի պատկառելի քանակութեան է հասնում և որոնք այսօր այս կամ այն պատճառով անկարող լինելով մասնակցել իրանց հայրենիքում իրանց ծխական ընտրութիւններին՝ այսօր այստեղ էլ անկարող են մասնակցել իրանց վերաբերող հարցին, որովհետև ծխական չեն, մինչդեռ այդ անդարմանութիւնը կարելի է վերացնել, թոյլ տալով մինչև ընտրութիւններ կայացնելը գրել ծխականների ցուցակում:

Սկզբունքով ոչ ոք հակառակ չը լինելով այն մտքին, որ իւրաքանչիւր հայ, լինի դա տղամարդ թէ կին, որը հասել է 21 տարեկան, իրաւունք ունի մասնակցելու ընտրութեան, միայն գտնում էին, որ այդ հարցը հապճեպ վճռելու հարց չէ և որ շատ տարաձայնութիւնների և դժգոհութիւնների առիթ կը տայ, եթէ մենք լուրջ և բազմակողմանի չը քննենք. ուստի աւելի լաւ է, բարդութիւնների առաջը առնելու համար, ղեկավարուել Կաթողիկոսի տուած հրահանգով, այն է՝ տալ իրաւունք մասնակցելու ընտրութեան միմիայն ծխականներին, թողնելով ոչ-ծխականներին ընտրութեան մասնակցելու հարցի վերջնական լուծումը Էջմիածնում գումարուելիք պատգամաւորական ժողովին:

Լսելով այս վիճաբանութիւնները դուրս բերի, որ, յարուցանելով վերոյիշեալ հարցը, ոմանք մարդիկ ունեցել են յայտնի նպատակ, որին հասնելու համար նոյնիսկ չէին խորշում շահագործել այնքան մօդնի դառած խօսքեր՝ ինչպէս են բանւորներ և աշխատաւոր դաս, որոնց շահերի երբ թէ փաստաբաններ են հանդիսանում այսօր: Բացի դրանից այդ պարոնները կարծես թէ ձգտում էին աւելի ազատամիտ երևալ, քան են:

Այդ պարոնների բերանից կարելի էր լսել այսպիսի խօսքեր: «Օրէնքն է ժողովրդի համար և ոչ թէ ընդհակառակը:

Այո, պարոններ, հասկանում ենք այդ տարրական ճշմարտութիւնները. սակայն չը պիտի մոռանալ և այն, որ ամեն մի հին, ժամանակին չը համապատասխանող օրէնք վերացւում է, նրա տեղ նորը մտցնւում օրինական ճանապարհով և այն էլ բազմակողմանի լուրջ քննութիւնից յետոյ: Վերոյիշեալ հարցը լուրջ հարցերից է, որը պիտի վճռէ ոչ թէ կիրակի օրւայ նման անպատրաստ ժողովում, այլ աւելի կօմպետենտ ժողովում և աւելի պատրաստականութիւն ունեցող մարդկանց միջոցով:

Այդպիսի մի հեղինակաւոր ժողով պէտք է ընդունել Էջմիածնում կայանալիք ազգային կենտրոնական ժողովը, որին ծխական ժողովները պիտի դիմեն, ներկայացնելով իրանց ցանկութիւնները: Իսկ մինչև այն, իմ կարծիքով, ծխական ժողովները կարող են վճռել, որ ոչ ծխականները մասնակցեն ժողովին միմիայն խորհրդակցական ձայնով, որով որոշ չափով պահպանուած կը լինեն այդպիսիների իրաւունքները:

Եւ միթէ այդպէս չեն կատարւում մեզանից հարիւր անգամ աւելի կրթուած երկիրներում, այն երկիրներում, որոնց վրայ միշտ սիրում են հարկը եղած դէպքում մատնացոյց անել և օրինակներ բերել: Չեմ կարծում, որ այդ պարոնները այնքան անգէտ լինեն, որ չիմանան, թէ լուսաւոր երկիրներում հպատակութեան և ուրեմն և ձայնատուութեան իրաւունք ձեռք բերելու համար յայտնի ժամանակամիջոց է պահանջւում ցանկացողներից: Եթէ մեզանից լուսաւորւածները այդպէս են վարւում, հարկաւ ունենալով դրա համար հիմնաւոր պատճառներ, ապա ինչպէս էք դուք որոշում, որ ընտրութիւններից նոյնիսկ մի ժամ առաջ ցանկացողները ծխականներ գրուեն և մասնակցեն ձայնատուութեան: Որովհետև առաջիկայ կիրակի պիտի կայանայ Զգրաշէնում պատուիրակների ընտրութիւն, ուստի հարկ եմ համարում ժողովականների ուշադրութիւնը հրաւիրել ներկայ նկատողութեան վրայ:

Ոչ-ծխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Рѣчь» լրագիրը հաղորդում է, որ Փոխարքայի Պետերբուրգ գնալու մասին տարածուած լուրը հիմքից զուրկ է:

—

Մօտ օրերս կայացաւ Կովկասում կարգը վերականգնելու առիթով Փոխարքայի կողմից առաջարկուած մի շարք միջոցների հաստատումը:

—

Թիֆլիսում ստացուած տեղեկութիւններից երևում է, որ նախկին պատգամաւորներ Միխայլիչենկօն, Ռամիշվիլին, և Ժորդանիան իսկապէս ձերբակալուած էին Պետերբուրգում և տարուել էին ոստիկանատուն, բայց նոյն օրը նրանց բաց էին թողել: Դրանք արդէն հեռացել են Պետերբուրգից, բայց ո՞ւր են գնացել, յայտնի չէ:

—

Բժկապետի կին Վէրա Ա. Գէորգ-Բէգեանը, Սրբուհի Ղազարեանը, Զ. Մեհրաբեանը, Եղ. Խալաթեանը, Շուշ. Բայսողոլեանը և Սաֆ. Պետրոսեանը դիմել են նահանգապետին, խնդրելով թոյլ տալ հիմնել Թիֆլիսում մի ընկերութիւն «Կովկասի շրջանի որբերի խնամատար կանանց ընկերութիւն» անունով, ներկայացնելով ընկերութեան կանոնադրութեան նախագիծը: Թիֆլիսի նահանգական ընկերութիւնների գործերով զբաղւող վարչութիւնը հնարաւոր գտաւ հիմնել յիշեալ ընկերութիւնը: («Отг.»)

—

Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, որ Թիֆլիսի թեմի առաջնորդը, ապօրէնի գտնելով Թիֆլիսի Թանդոյեան եկեղեցու պատուիրակների ընտրութիւնը Վեհափառ Կաթողիկոսի թ. 693-դ կոնդակի 5-դ և 787-դ թ. կոնդակի 1-ին յօդուածների հակառակ ընտրութիւն կատարելու պատճառով, իր № 1060-դ գրութեամբ բեկել է և նոր ընտրութիւն նշանակել:

—

«Отг.» լրագրին հաղորդում են ամենահաստատ աղբիւրից, որ Կովկասի ոստիկանական մասի կառավարչի դիւանատունը կարճ ժամանակամիջոցում կը բարենորոգւի:

—

Նոր ստացուած գրքեր. ստացանք՝ 1) Ա. Բէբէլի «Քրիստոնէութիւնը և սօցիալիզմը», թարգմանութիւն ռուսերէնից Ս. Տէր-Անանեանցի, հրատար. Յովհաննէս Դաւթեանի, գինն է 10 կօպ., 2) Գիւի դը Մօպասանի՝ «Մի կեանք», վէպ, Լև Տօլստոյի առաջաբանով, թարգմ. Ս. Տէր-Անանեանցի, 428 երես. գինն է 1 ռուբլի:

—

Մ. Նասիձէն դիմել է Թիֆլիսի նահանգապետին, խնդրելով թոյլատրել իրան հրատարակել Թիֆլիսում Ֆէկլա Տ. Գորնօստայեվայի խմբագրութեամբ ամենօրեայ լրագիր ռուսերէն լեզուով «Тифлисская Рѣчь» անունով:

—

Գրենը, որը մի ժամանակ Կիևում պրիվատ-դօցենտ էր եղել, «Черном. Вѣдом.» լրագրի սաւլով, խնդիրք է տուել Փոխարքային, որ ուզում է հրատարակել «Прометей» անունով մի լրագիր և խնդրում է դրամական օժանդակութիւն տալ իրան:

—

Շորագեալի գաւառի Ղարիսի գիւղից հաղորդում են, որ վերջին ժամանակներս, այդ գաւառում աղջիկ փախցնելու դէպքեր յաճախ են կրկնվում: Մօտ օրերս 11 զինուած անձինք ատրճանակներ պարպելով մտան գիւղացի Ամաշուկելիի տան բակը այն ժամանակ, երբ վերջինս իր ընտանիքի հետ ընթրում էր: Նրանք ներս խուժեցին Ամաշուկելիի բնակարանը, գողացան 18-ամեայ աղջիկ Բաբիլինին և անհայտօրէն հեռացան: Այդտեղից նրանք գնացին Նարեան գիւղը, մտան եկեղեցի և պահանջեցին քահանային, որը շուտով եկաւ և կատարեց կողոպտիչներից մէկի հետ պսակադրութեան հանդէսը:

—

Փօթից յուլիսի 27-ին հեռագրում են «Շրոմա» լրագրին. «Երէկ Աբաշայում իր տան բակում սպանեցին պրիստաւ Ղարանիշվիլին: Պահակի զինուորները վիրաւորեցին պօստատարին:

—

Թիֆլիսի տրամվայի անոնիմ ընկերութեան ժամանակաւոր վերատեսուչ նշանակված է Անճալեան ձիաքարշի նախկին պայմանակցի որդի երդուեալ հաւատարմատար Կորգանովը:

—

Անդրկովկասի երկաթուղու ճանապարհների ժամանակաւոր կառավարիչ Նէյգեբաուէրը իր պարտականութիւնները յանձնել է շինարարական բաժնի կառավարչի օգնական Ալ. Բ. Եւանգուլեանին, որը պաշտօնից հեռացված էր:

—

Մեզ հաղորդում են Գորու գաւառից, որ յուլիսի 21-ին Ռուիսի գիւղում մի անյայտ անձ սպանել է տեղացի Գեդեւլաշվիլիին: Ասում են, որ Գեդեւլաշվիլին կասկածւում էր լրտեսութեան մէջ:

—

Բագուից հեռագրում են, որ յուլիսի 25-ին, երեկոյեան ժամը 9-ին. Բագու քաղաքի կայարանի կառավարիչ Նակլերսկիի արքունական բնակարանում նրա օգնական Գրախօվսկին անզգոյշ վերաբերւելով ատրճանակի հետ անսպասելի կերպով սպանեց այնտեղ գտնւող Միխայիլ Շիշօկինին: Դիակը ուղարկվել է երկաթուղային հիւանդանոցը:

—

Այս ամառ զարմանալի հով անցաւ Թիֆլիսում: Յուլ. ամսվայ ընթացքում միայն մի քանի օր յուլիսեան շոգեր եղան. իսկ առհասարակ շարունակւում էր յունիսի և նոյն իսկ մայիսի եղանակը: Վերջին օրերում եղան գիշերներ, երբ ջերմաչափը իջնում էր մինչև 16—14 աստիճան ըստ Րէօմիւրի: Շրջակայ ամարանոցներում այնպիսի ցուրտ օրեր եղան, որ մարդիկ լուրջ մրսում էին: Բայց, ամառը դեռ չէ վերջացել, դեռ մեր առաջ կանգնած է օգոստոս ամիսը:

—

Պետերբուրգից Պետական Դումայի անդամներից մէկը Թիֆլիս հեռագրում է 18 խօսքից բաղկացած մի հեռագիր, Թիֆլիսում ստացվել է հեռագիր միմիայն 5 խօսքից բաղկացած... Ո՞ւր կորան 13 խօսքը:

—

Զակար-Օղլուց «Կայծ» լրագրին գրում են հետևեալը. «Գեառգեառ գիւղում գտնւող արտիլերիստները, որ մինչև այժմ անմռունչ կատարել են իրանց հրամանատարների ամեն մի հրամանը, մօտ օրերս հրաժարվել են հնձել իրանց բաշխում գտնւած պետական խոտատեղերը և պահանջել են՝ հնձելու համար իւրաքանչիւրին տալ 1 ռուբլի, իսկ հաւաքելու համար 60 կօպ.: Դրանից անմիջապէս յետոյ, ճաշի ժամանակ, նրանք շուռ են տալիս կերակրով լիքը ահագին կաթսան ասելով. «Շունն էլ չի ուտի այս, մեզ մարդավայել կերակուր տուէք»: Հետևանքների մասին ոչինչ յայտնի չէ: Զինւորները երկիւղ են կրում, որ իրանց գործադուլը կարող են խախտել տեղացի կամ շրջակայ գիւղացիները, հնձելով խոտը:

—

Երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը Գեօրգիեվկ գիւղում (Զանձակի գաւառ) յուլիսի 3-ին հաստատել է գիւղատնտեսական «Նադեժդա» ընկերութեան կանոնադրութիւնը: Ընկերութեան հիմնադիրն է Գօլիբ գիւղի բնակիչ Բէյտենբախը: («Բ. Կ.»):

—

«Черном. Вѣстникъ» լրագրի խմբագիր Ս. Միխայլօվին դատի են ենթարկվել այդ լրագրում տպված մի նամակի պատճառով: («Շր.»):

—

Եւրոպական թերթերը հաղորդում են, որ սրանից 8 օր առաջ բրիտանական ստորին պալատում բրիտանական ստատս-սեկրետար Գրէյը յայտնել է, որ անգլիական կառավարութիւնը շատ հաստատ տեղեկութիւն է ստացել Պարսկաստանի մայրաքաղաքում ծագած ժողովրդական խռովութիւնների մասին: Թէհրանի անգլիական դեսպանատանը ապաստան են գտել մօտ 12,000 պարսիկներ, որոնց համար դեսպանատունը դիմել է պարսից կառավարութեանը բաւարարութիւն ստանալու համար:

—

Գերմանիան որոշել է այս տարի փառաւոր հանդէսով տօնելու Գրայֆսվալդի համալսարանի 450-ամեայ յօբելեանը: Այդ համալսարանը Գերմանիայի ամենահին համալսարաններից մէկն է, որ հիմնել է հերցոգ Վրատիսլաւը 1456 թ.:

—

Թէհրանից հեռագրում են գերմանական «Berl. Tageb.» լրագրին, որ Թիւրքիայի և Պարսկաստանի միջև ծագած սահմանային կօնֆլիկտը հետզհետէ աւելի սուր բնաւորութիւն է ստանում: Թիւրքերը երկու տէրութիւնների սահմանագլխում գրաւել են մի տեղ, որ հաստատապէս պատկանում է Պարսկաստանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Պարիզ, յուլիսի 29-ին

(Զօլա-Դրէյֆուս)

Զօլան, Rougon-Maquart-ների, ընդարձակ և բազմաթիւ հատորների, բնագէտ և սօցիոլոգ հեղինակը, «Երեք քաղաքների», և «Չորս Աւետարանների» ստեղծողը, ստեղծող և հիմնադիր իր քարոզած Réaliste դպրոցին, սիրուած և յարգուած ամենից, իր անունը անմահացած և աշխարհահռչակ, պաշտելի է նաև իր մի ուրիշ գործով: Եւ այդ գործը Դրէյֆուսի խնդիրն է:

Գործ, որը Զօլան այնքան յանդուգն կերպով ընդգրկեց, գործ, որի իրագործման համար, իր հանգստութիւնը և ժամանակը զոհելուց զատ, ենթարկուեց նաև հալածանքի, թշնամութեան և նախատինքների, լինի նրանց կողմից, որոնք դեռ ևս շարունակում են հայհոյել և նախատել նրա յիշատակը. և դրանք Ֆրանսիայի նացիօնալիստ շովինիստները և կղերականութեան անարդարութեան և անբարոյականութեան փոնատիկոս և անմիտ պաշտպաններն են: Լինի և նրանց կողմից, որոնք այսօր նրա յիշատակի համար հիացման արձան են կանգնեցնելու, որոնց համար այսօր հանդիսանում է մարդկութեան անմոռանալի բարերար, ճշմարտութեան և արդարութեան պաշտպան և քարոզիչ: Եւ այս վերջիններս կազմում են կառավարութիւնը:

Զօլան 1897-ին, 57 տարեկան, արդէն ունէր այն ամենը, ինչ որ իր հասակի ամեն մարդ ցանկանում է ունենալ: Իր անունը տարածուած ամբողջ աշխարհ, հարուստ, իր տունը շարունակ յաճախում էին իր ժամանակի ամենամեծ հանճարները, ուրախ և երջանիկ ապրում էր իր սիրած կնոջ հետ, մի խօսքով նրան ոչինչ չէր պակասում: Նա ուրիշ ոչինչ չէր սպասում, եթէ ոչ հանգստութեան և փառքի մէջ վերջացնել իր օրերը:

Զօլան այդպիսի դրութեան մէջ էր, երբ ստեղծուեց Դրէյֆուսի խնդիրը:

1895-ի դատաստանական մեծ սխալը, (որը Դրէյֆուսին դատապարտում էր և աքսորում Սատանայի կղզին (Ile de Diable) շատերի աչքերը բացած էր, և Զօլան որ մինչև այդ ժամանակ ոչ մի քաղաքական խնդիրներով չէր զբաղուած, յանկարծ նա իր ամբողջ ուժով և կորովով ընկնում է դէպի ասպարէզ պաշտպանելու անմեղին:

Զօլան ըմբռնում էր իրողութիւնը, նա իր պարզ և պատրաստ մտքով, որը նրան այնքան սովորական է, ընդգրկել էր ճշմարտութիւնը, և ինչպէս որ նա միշտ ճշմարտութիւնը քարոզող և արդարութիւնը պաշտպանող եղած էր, նա չէր կարող լռել և թողնել, որ կղերական ոճրագործութիւնը և և նացիօնալիստների անարդարութիւնը յաղթող լինէին:

Եւ ահա այդ պատճառով էր, որ Զօլան 1898 թւին իր անմահ նամակով դիմեց դէպի հասարակապետութեան նախագահ՝ Ֆէլիքս-Ֆօրը, ինքը նաև հաւատացած լինելով որ այդ նամակը պէտք էր նախատինքների և հայհոյութիւնների, պատժի և հալածանքի ենթարկվէր: Եւ իսկապէս նրան հայհոյեցին, նախատեցին, մատնիչի պաշտպան, ոչ հայրենասէր անուանեցին. և Զօլան ստիպված էր հեռանալ առժամանակ իր սիրած Ֆրանսիայից:

Բայց այսօր ամեն ինչ արդէն յայտնի է, ամեն ինչ պարզ. Դրէյֆուսի անմեղութիւնը պաշտօնապէս յայտարարուած է. Դրէյֆուս նշանակված է դարձեալ ֆրանսիական բանակի սպայ, և Légion d'honneur-ը—փայլում է այժմ իր կուրծքի վրայ: Ամբողջ իր պաշտպանները, որոնք առաջ նախատված և հալածված էին, այսօր արժանացան ոչ թէ միայն Ֆրանսիայի, այլ ամբողջ Հին և Նոր Աշխարհի լրագիրների յարգանքներին և համակրութեան. ինչպէսնաև Զօլա, գնդապետ Պիկար և ընդհանրապէս ֆրանսիական սենատի և պարլամենտի ամբողջ ձախակողմեանները:

Առ. Օհանեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Ջուղա, յունիսի 28-ին

Ամսիս 22-ին, ս. Սահակի և ս. Մեսրոբի տօնի օրը ս. Ամենափրկիչ վանքում մատուցվեց պատարագ, որից յետոյ կատարվեց նորակառոյց մատենադարանի բացման և օրհնութեան հանդէսը ամբողջ հոգևորականութեան և խուռն բազմութեան ներկայութեամբ:

Փոխանորդ հայրը թէ եկեղեցում և թէ մատենադարանի շինութեան մէջ խօսեց բաւականաչափ ազդու և յուզված: Նախ խօսեց ազգային եկեղեցական այդ նշանաւոր գործիչների մասին յիշեցնելով նրանց մատուցված խոշոր ծառայութիւններն ու կատարած մեծ դերը, բացատրելով նրանց տուած բազմաթիւ օգուտներն ու թողած բարի ազդեցութիւնը մեր այն ժամանակվայ գործիչների վրայ, ծնեցնելով բազմաթիւ հերոսներ: Յետոյ իր ուրախութիւնը յայտնեց, որ ականատես է լինում մի ուրիշ ազգային հաստատութեան բացման, օրհնեց հիմնադիրին և ցանկութիւն յայտնեց, որ ուրիշներն ևս նրա բարի օրինակին հետևելով հիմնեն նոյնանման հաստատութիւններ:

Մատենադարանը հիմնել է բնիկ նոր-ջուղայեցի, իսկ այժմ Պարսկաստանի Կալկաթա քաղաքում հաստատված վաճառական պ. Թադէոս Տէր-Յովհաննիսեանցը, իր նոր՝ «Պատմութիւն Նոր-Ջուղայի» երեք հատոր գրքի հեղինակ և ս. Ամենափրկիչ վանքի բազմաշխատ առաջնորդի (1851—1891 թ.) Միրզա Յարութիւն Տէր-Յովհաննիսեանցի յիշատակին. ինչպէս լսում եմ ծախսվել է մօտաւորապէս 2500 թուման. արդէն փոխադրվել են այդ շինութեան մէջ ս. Ամենափրկիչ վանքի բոլոր ձեռագիրներն ու գրքերը, ինչպէս և հնութիւններ, նկարներ և այլն, և այլն: Ինչպէս լսում ենք, շուտով փոխադրվելու են նոյն շինութեան մէջ բոլոր միւս եկեղեցիների ձեռագիրները և հին նկարները, ուր կարելի է ասել բոլորովին ապահով կը մնան անհետանալուց. սրանով ս. Ամենափրկիչ վանքում աւելանում է մի պատուաբեր շինութիւն:

Լսում եմ, որ Կովկասի հայ կարօտեալների համար այստեղ հանգանակվել է 1000 ռուբլի, որը և փոխադրվել է Թիֆլիս յանձնախմբի գանձապետին:

Անգլիացիների տեղիս նորընտիր հիւպատոսը երէկ ժամանեց այստեղ մեծ շուքով:

Ֆրանսիայից արտաքսված և այստեղ հաստատված կաթոլիկ վարդապետների մասին արդէն գրել եմ: Սրանց գլխաւոր Պիէռ Դըմուէթի վերաբերմամբ մի նամակ եմ գտել՝ տպված «Արմենիայի» 1893 թ. ապրիլի 3/15 թւի մէջ, գրված Ուրմիից փետր. 20/4 մարտին, որը դարձեալ գալիս է հաստատելու սրանց ինչ լինելը:

«Պարսկաստանի կաթոլիկ փոխանորդները, չը գիտեմ ինչու, սոսկալի ատելութեամբ լցված են դէպի հայ ազգը և միշտ առիթ կորոնեն իրանց այդ ատելութիւնը գործով ալ ցուցնելու. Ուրմիի մէջ որ իրանց կենտրօններէն մէկն է, ունեն երկսեռ ուսումնարան, ուր բացի ասօրիներից կը յաճախեն նաև հայ աշակերտներ: Նիկոլա անուն բաշկալեցի մի հայ աղա հօրէ որբ, իր մօր սոփողմամբ (որ ամուսնանալով մի ուրիշ մարդու հետ կերթայ Կօչանիս) կը մտնէ այդ Լազարեան անունը կրող կրօնաւորներուն վարժարանը, հայերէն և ֆրանսերէն սովորելու համար:

«Մի քանի օր առաջ ֆրանսերէնի ուսուցիչ, Փեէր դը-Մուէթ (որը այժմ Նոր-Ջուղայումն է), մի կոպիտ կրօնաւոր, դասատուութեան միջոցին տեսնելով որ Նիկոլան դասը լաւ չէ պատրաստեր, կը դիմէ իր սովորական մանկավարժական մեթօդին, որի գործադրութիւնն առաւելապէս, ինչպէս լսեցի, հայերուն յատկացած է. կաղնու հաստ գաւազանը և մի քանի անգամ խեղճ պատանուն գլխին ուժգին կերպով կը խփէ:

«Պատանին ուղեղի յանկարծական ցնցման տակ պտոյտ-պտոյտ կը գայ: Բարբարոս ուսուցիչը այդ բանով գոհ չի լիներ և աքացի սաստիկ հարուած մ'ալ կը տայ փորուն, որով տղան ուշաթափ կիյնայ գետին:

«Խեղճը երկու երեք օր խելագարված վիճակի մէջ մնալէ ետք, երեք օր առաջ մեռաւ սոսկալի տանջանքներ կրելով: Նա տասնուվեց տարեկան կը լինէր: Տեսնենք ո՞վ պիտի բողոքէ այդ անմեղ զոհի համար... կարծեմ ոչ ոք, քանի որ այստեղ, Պարսկաստանի մէջ, դժուար թէ օրինաւոր քննութիւն կատարվի և այդպիսի հանգամանքի մէջ անիրաւութիւնը պատժվի:

«Նիկոլան օսմանեան հպատակ էր: Ցուցարկաւորութիւնը իրանք կաթոլիկները կատարեցին:

«Այդ խեղճ պատանու մասին երկար ու բարակ խորհրդածութեանց մէջ մտնել չեմ ուզեր, բայց միայն այս կասեմ, որ թող այդ տխուր պատահարը մի մեծ խրատ լինի այն անմիտ հայերուն, որ իրանց զաւակները այդ կատաղաբարոյ ու ագէտ կրօնաւորներուն մօտ կը դրկեն: Թող խրատուին և զգուշանան այդ օտարամոլ հայերը, որոնք անմտօրէն կը կարծեն թէ անոնց տուած կրթութիւնը այն է ինչ որ Եւրոպայի մէջ կը տրուի:

Մշեցի Զանոյրոյ»

Ես ևս իմ կողմից Նոր-Ջուղայի հայ ծնողներին զգուշացնում եմ. թող աչքերը ու ականջները լաւ բանան, որովհետև այդ հրէշը այժմ այստեղ է բոյն դրել:

Արձագանք

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Ֆրանսիան կարելի է վերջնականապէս մտած համարել ռամկավարութեան բեղմնաւոր ճանապարհի մէջ:

Միշտ ազատութեան անունից երդվող, բայց ազատութիւնը քամակից դաւաճանօրէն դաշունահարող զանազան օպպօրտիւնիստ, մաքսապաշտպան մինիստր-նախագահ Մելինները, Դիւպիւիները, Րիբօները յուսահատ քաշվել են իրանց որջը, կուռ ասպարէզը թողնելով ռամկավարութեան ձախակողմեան թևերին:

Ֆրանսիական ժողովուրդը, այս վերջին տասնեակ տարիների ընթացքում, Դրէյֆիւսի ցաւալին ու աշխարհադղորդ դատից ի վեր, ինքն իրան գտել է և նա շարունակ, վճռական ու հաստատ քայլերով դիմում է դէպի ձախ:

Մինչդեռ վերոյիշեալ տխրահռչակ վարչապետները յենվում էին պարլամենտի աջակողմեան և կենտրոնի թևերի վրայ, Վալդէկ-Ռուսօյից և մանաւանդ Կոմբից յետոյ, Ֆրանսիան կառավարվում է բացառապէս ձախակողմով—ռադիկալ, ռադիկալ-սօցիալիստ և սօցիալիստ թևերով:

Եւ մինչդեռ Վալդէկը, Կոմբը, Սարիէնը զգում էին երբեմն կենտրոնի աջակցութեան կարիքը, պարլամենտական այս վերջին ընտրութիւնները մայիսի 6-ի և 20-ի ընտրութիւնները Սարիէն—Կլեմանսօ-Բրիանի մինիստրութեան ապահովեցին զուտ ձախակողմեան, ջախջախիչ մեծամասնութիւն:

Եւ արդարև այդ ընտրութիւնները, Ֆրանսիայի պարլամենտական կեանքում անօրինակ մի յաղթանակ հանդիսացան Հանրապետութեան համար:

Այդ յաղթանակը շատ բնորոշ, շատ նշանակալից և ապագայի համար շատ յուսատու է հէնց այն պատճառով, որ իր ոտքի տակ հողը կորցրած հակայեղափոխութիւնը, աջակողմից մինչև կենտրոն, հաշւելով և ուռուցիկ յօդունգների եռև սպասանած նացիօնալիստներին՝ պատրաստվել էին գերագոյն կռւի:

Նրանք մի կողմից շահագործեցին Եկեղեցին պետութիւնից բաժանելու անհրաժեշտ գործողութիւններից մէկի՝ եկեղեցական գոյքերի ցուցակագրման առիթով ծագած ցաւալի միջադէպերը, որոնք հէնց իրանց ձեռքի գործն էին, միւս կողմից հետզհետէ աւելի գիտակցող ֆրանսիական պրօլետարիատի կռիւները, խոշոր չափերով և խոշոր աստիճանների վրայ կատարվող զանազան գործադուլները և դրանց իբրև պսակում՝ մայիսի 1-ի անյուր սարսափը, որի ամբարիշտ ու շահադէտ գործաւորները իրանք էին եղել:

Գիւղերում և մանր բուրժուազական շրջաններում հնչում էր մի նշանաբան—արիւնոտ յեղափոխութիւն, որ պէտք է առաջինների ձեռքից խլէր, եկեղեցական գոյքերից յետոյ, իրանց հողերը և երկրորդներին դարձնէր պրօլետարական վրահաս դիկտատուրայի անողորմ զոհեր...

Բայց հակառակ հակայեղափոխութեան դերմարդկային ճիգերին՝ յաղթեց ռամկավարութեան դատը:

Եւ յաղթեց մանաւանդ յեղափոխական պրօլետարիատը, օրէնսդրական պալատ ուղարկելով իր բոլոր պետերին, նոյնիսկ Ժիւլ Գէդին, Ժօրէսի տաղանդաւոր ախոյեանին, ֆրանսիական սօցիալիզմի այդ անողոք ու էնտուզիաստ ղեկավարին, որն իր դիմաց ունէր կապիտալիզմի հզօրագոյն ասպետներից մէկը, դը Մօտոյ, անցեալ ընտրութիւնների մէջ յաղթական:

Բաղդատմամբ նախորդ ընտրութիւններին, ձախակողմի չափաւոր տարրերը շահեցին 250,000 ձայն աւելի, իսկ սօցիալիստները՝ 270,000:

Քուէարկութեան առաջին շրջանից, մայիսի 6-ի ընտրութիւններից յետոյ, Կամիլ Պելլըտան՝ Կոմբի մինիստրութեան ազդեցիկ անդամներից մէկը, այսպէս է բացատրում ընտրութիւնների ելքը:

«Մեր յաղթանակն ապահովող միլիօնաւոր քուէներից բղխում են երկու գաղափարներ. մէկը վերաբերում է անցեալին. դա հաւանութիւնն է կղերականութեան դէմ մղված կուին. միւսը՝ վերաբերում է ապագային. դա հաստատութիւնն է տնտեսական և սօցիալական րէֆօրմների: Մայիսի 6-ի և 20-ի ապագայ ընտրեալների համար մի ճշմարիտ սնանկութիւն կը լինէր այս կէտում յուսախաբ անել երկիրը: Հնչել է ժամը այն րէֆօրմների, որոնք այնքան երկար ժամանակով յետաձգվեցին շնորհիւ օրէնսդրական դանդաղ գործունէութեան, որի մէջ մեծ դեր էր խաղում արտօնեալների խուլ ու յամառ դիմադրութիւնը:

«Այդ րէֆօրմները աւելի կատարեալ դարձնելու համար ընդհանուր քուէարկութիւնը չը վախեցաւ ջնջելու իր ընտրութիւնները, պարլամենտ ուղարկելով ձախակողմեան մեծամասնութիւն:

«Ոչ յեղափոխութիւն և ոչ էլ կիսատ-պռատ րէֆօրմներ, որոնք անունով միայն գոյութիւն ունեն: Պահանջվում են իրականութիւններ:

«Քուէարկութեան ամենայստակ դասերից մէկն է ռամկավարական դատի գործաւորների միութիւնը, որպէս զի նրանք միահամուռ ոյժերով կատարեն ամեն իրանց պարտականութիւնը...»

Եւ իսկապէս Ֆրանսիական Հանրապետութեան պարլամենտական ներկայ շրջանը ամենահետաքրքիր ու ամենաբնորոշ շրջաններից մէկը պիտի լինի:

Իշխանութեան գլուխ է անցել բուրժուազիայի ծայրահեղ ձախակողմը. ռադիկալ և ռադիկալ-սօցիալիստ կուսակցութիւնը: Առաջինը՝ յանձին մինիստր-նախագահ Սարիէնի, երկրորդը՝ ներքին գործերի մինիստր Կլեմանսօյի:

Հետաքրքիր և բնորոշ է այս շրջանը այն տեսակէտից, որ, ինչպէս անգլիական պարլամենտը ներկայացնում է զուտ լիբերալ մեծամասնութիւն, այսինքն, որ ներկայ լիբերալ մինիստրութիւնը՝ իր օրէնսդրական գործունէութեան մէջ կարիք չունի յենվելու ոչ պահպանողական և ոչ էլ սօցիալիստական ձայների վրա, այնպէս էլ Սարիէն Կլեմանսօ մինիստրութիւնը ստիպված չէ իր ծրագիրը անցկացնելու համար յետադիմական և սօցիալիստական քուէների աջակցութեան դիմելու:

Ուրեմն Սարիէն-Կլեմանսօ մինիստրութիւն բացարձակապէս անկախ է և իր գոյութիւնը պահպանելու համար հարկադրված չէ զիջումներ անելու ոչ ծայրահեղ աջակողմին, ոչ ծայրահեղ ձախակողմին:

Արդ, պարլամենտական այս շրջանը, ինչ պիտի տայ մի շարք անյետաձգելի րէֆօրմների ծարաւի երկրին: Ռադիկալ-սօցիալիստները, սօցիալիստներից տարբերվում են այն հիմնական գծով, որ մինչդեռ վերջինները իրանց ծրագրային էութեան անկիւնաքարն են համարում մասնաւոր սեփականութեան համայնականացումը, առաջինները, այդ սկզբունքը ժխտում են: Եւ ահա հէնց այս պատճառով էլ՝ ռադիկալ-սօցիալիստները մնում են բուրժուաներ, ճիշտ է, բուրժուազական իդէօլօգիայի ծայրայեղ ձախակողմի ներկայացուցիչներ:

Ծայրայեղ ձախակողմի ներկայացուցիչներ՝ որովհետև նրանք ընդունում են սօցիալիզմի մինիմալ ծրագրային պահանջները, որոնք մաքսիմալ պահանջներ են ծայրահեղ բուրժուազիայի:

Ֆրանսիական պարլամենտի այս նստաշրջանը բնորոշ է, ասում ենք, նրա համար, որ հնչել է ժամը, երբ ռամկավարական բուրժուազիան պէտք է ցոյց տայ, թէ որքան արդարացի են իր վրա դրված յոյսերը, թէ նա, այժմ, երբ միանգամայն անկաշկանդ ու անկախ է, շնորհիւ իր զուտ ու ջախջախիչ մեծամասնութեան, քաջութիւն պիտի ունենայ գործադրելու իր մաքսիմալ ծրագրի՝ եթէ ոչ բոլոր, գոնէ գլխաւոր կէտերը:

Ահա հետաքրքիր և յուզիչ հարցը:

Այս նստաշրջանը, որ հանդիսացաւ ռադիկալ և ռադիկալ-սօցիալիստ կուսակցութիւնների վճռական յաղթանակը, ներկայացնում է նոյնպէս ամենավտանգաւոր շրջանը բուրժուազիայի ծայրահեղ ձախակողմի համար: Որովհետև այդ փառաւոր յաղթութիւնը կապէս կրում է իր մէջ սարսափելի պարտութիւնը բուրժուազական իդէօլօգիայի: Իշխանութեան գլուխ գտնվող ծայրահեղ բուրժուազիան, եթէ անկարող եղաւ իրագործելու իր մաքսիմալ ծրագիրը, անխուսափելի կերպով յուսախաբ պէտք է անէ այն ահագին մասսան, որ ռադիկալիզմի և ռադիկալ-սօցիալիզմի մէջ տեսնում է իր շահերի հեղինակաւոր և անկեղծ պաշտպանը: Ենթադրենք նոյնիսկ, որ իրագործեց. այս դէպքում Սարիէն-Կլեմանսօյի մինիստրութիւնը անկարող լինելով ջնջել ողբերգական կռիւը կապիտալի և աշխատանքի միջև, դարձեալ յուսախաբ պիտի անէ աշխատող ու տառապող մասսային և փութացնէ սօցիալիզմի յաղթանակը:

Բայց, աւելորդ է ասել, որ ռադիկալ-սօցիալիստների ծրագրի գործադրութիւնը մի հսկայ քայլ կը լինի դէպի պրօլետարիատի փրկելը:

Ամենայն դէպս, պարլամենտում, կուսակցութիւնների կուի ծանրութեան կենդրոնը տեղափոխված է դէպի ձախ: Իսկական պայքարը այժմ մղվելու է այն տարրերի միջև, որոնք յաւակնութիւնն ունեն սօցիալական արդարութեան վերջնական յաղթանակի գործաւորները լինելու, որոնք աշխատում են դէպի իրանց ձգել երկրի տառապող մասսան:

Ահա, ինչու, երկու հակամարտ կուսակցութիւնների հանճարեղ պետերը, Ժօրէս և Կլեմանսօ, պարլամենտի հէնց առաջին նիստում, հանդէս եկան իրանց հոյակապ, իսկապէս էպիկ հռետորական ըմբշամարտութեամբ:

Ժօրէս փառաբանեց յեղափոխական պրօլետարիատի իդէալը, իսկ Կլեմանսօ յեղափոխական բուրժուազիայի իդէալը: Մէկը երգեց կօլլեկտիվիզմի գեղեցկութիւնները, իսկ միւսը՝ ինդիվիդուալիզմի, արդար, վեհանձն բարի:

Այդ երկու ճառերը կը մնան ոչ միայն Ֆրանսիայի, այլ և գուցէ ամբողջ աշխարհի պարլամենտական կեանքի պատմութեան մէջ աննման երևոյթներ:

Ժօրէսը ապագայի առաքեալն էր, Կլեմանսօն ներկայի:

Եւ եթէ այդ տիտանական կռւում, Կլեմանսօն կարողացաւ մի վարկաբեկ, անկարող, թռիչքներից զուրկ իդէօլօգիայի տալ որոշ պրեստիժ, եթէ բուրժուազիան կարողացաւ ներկայանալ, որպէս մասսաների ձեռնհաս պաշտպան, այդ շնորհիւ միմիայն Կլեմանսօյի անզուգական ու անկրկնելի տաղանդի էր:

Բայց ամենագեղեցիկ խօսքերն անգամ վարդի չափ չեն ապրում: Ժողովուրդը, աշխատող, տանջվող մասսան կարիք ունի գործերի:

Ի՞նչ է տալիս Սարիէն-Կլեմանսօ մինիստրութիւնը ժողովրդին: Ահա կարևորը: Այդ էլ կը տեսնենք յաջորդ անգամ:

Տ. Զ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բալկանեան թերակղզու վրա բռնկված հակայունական յուզերը հետզհետէ վտանգաւոր բնաւորութիւն են ստանում: Ինչպէս հաղորդում են գերմանական լրագիրները, Բուլղարիայի մայրաքաղաքում շուտով պէտք է կայանայ մի միտինգ, որի համար բուլղարական կառավարութիւնը որոշել է նախազգուշական միջոցների դիմել: Բուլղարիայի պատերազմական մինիստրը նոյնիսկ Սօֆիայի ոստիկանութեան տրամադրութեան տակ զօրք է դրել: Կազմակերպվում են նոյնանման միտինգներ նաև Սլիվնօ և Փիլիպպօպոլ քաղաքներում:

Այդ ցոյցերի համար յոյները դիմել են արևմտեան Եւրոպային: Գերմանական «F. Z.» լրագիրը Աթէնքից յունական մի մեծ ընկերութիւնից ստացել է հետեւեալ հեռագիրը. «Մենք յոյներս եւրոպական ազգերին սրանով տեղեկացնում ենք այն վանդալականութեան մասին, որ գործադրում են Բուլղարիայի իշխանութեան մէջ և արևելեան Ռումելիայում. սրանով մենք եւրոպացիների պաշտպանութիւնն ենք խնդրում մեր սպանված եղբայրների համար, որոնց եկեղեցիներին և հոգևորականութեան ամենամեծ վիրաւորանքներն են հասցրել բուլղարները: Այդ բանը մարդկային ամենատարրական իրաւունքի և ազատութեան դէմ է»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

27 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի: «Կրթութեան լիգա»-ի համակայսերական համագումարը, որ կայանալու էր աշնանը, յետաձգված է անորոշ ժամանակով: Պատճառ համարվում է շրջանային բաժինների դանդաղ կազմվելը և կանոնադրութեան անհաստատվելը: Ընդհանրապէս ի նկատի է առնվելու քաղաքական ընդհանուր դրութիւնը:

ՄՕՍԿՎԱ, 26 յուլիսի: Շէրունենսկի միջանցքում ոստիկանութիւնը գտել է մաուզերի մի հրացան, գնդակացրի մի տեսակ գործիք, ատրճանակներ և բազմաթիւ թռուցիկներ: Տիխվինսկի փողոցում բռնված են չորս հոգի — ռազմիկ խմբի անդամների ցուցակներով և լուսանկարչական գործիքով: Մէշչանսկի փողոցում ձերբակալել են 6 հոգու, գտել են բազմաթիւ թռուցիկներ:— Օգոստոսի 2-ին նշանակված է կուսակցութիւնների նահանգական կօմիտէների ներկայացուցիչների և կենտրօնական կօմիտէի անդամների նախապատրաստական համաժողովը՝ օգոստոսեան համագումարի մասին խորհրդակցելու համար:

Հոկտ. 17-ի դաշնակցութեան կօմիտէի նիստին Գուչկովը կարդաց խաղաղ վերածնութեան կօմիտէի կազմած նոր ծրագիրը:

ՄՕՍԿՎԱ, 26 յուլիսի: Ալեքսեեվսկի հանքում արհեստի տուր ու դմբոց պատահեց. 2500 բանւորներ բաժանվեցին երկու բանակների. կան շատ վիրաւորվածներ: Սպանված են 2 հոգի: Կանչված դրագունները ձերբակալեցին խռովարարներին:

ՎԱՐՇԱՎԱ, 26 յուլիսի: Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը յայտարարել է, որ կառավարական և հասարակական հաստատութիւնների վրա տեղի ունեցող յարձակման դէպքում ստացուածքային պատասխանատուութեան է ենթարկվելու ամբողջ ազգաբնակութիւնը:

ՆԻՒ-ԵՈՐՔ, 26 յուլիսի: Վաշինգտոնում ստացված է պաշտօնական հաղորդագրութիւն, որից երևում է, որ Ալէուտեան կղզիների մօտ ամերիկացիները սպանել են անիրաւացի կերպով [illegible] որսող 5 ճապօնացիների: Ամերիկական մաքսային նաւն էլ իր կողմից ձերբակալել է 12 ճապօնացիների այդ իսկ պատճառով: Արտաքին գործերի վարչութիւնը ճապոնական դեսպանին ցաւակցութիւն է յայտնել, որ ամերիկացիները օրէնքը խախտողների հետ այդպէս խիստ են վարվել: Տօկիօյի ամերիկական դեսպանին տեղեկացրած է այն հեռագրի բովանդակութիւնը, որ ստացված է Ալիասկայից —այդ գործի համար մեկնած դատախազից: Ուղարկելով այդ հեռագիրը, Միացեալ Նահանգները մտադիր են կատարված միջնադէպի սոսկ իրողութիւնը հաղորդել, և ոչ թէ արդարանալ, կամ թէ հեռագրում յիշատակածից զատ նորից ներողութիւն խնդրել, որովհետև ծովափում որսող ճապօնացիները խախտել են սեփականութեան օտար իրաւունքները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի: Վախճանվեց պատմաբան պրօֆէսօր Կլիւչեվսկին:

ՄՕԳԻԼԵՎ, 26 յուլիսի: Ֆէյգէնբէրգի բնակարանում, երկու տեխնիկի ձեռքում պայթիւն առաջացաւ: Գտնված են 5 ռումբեր այն բնակարանում, որը սկզբում յեղափոխականների որջն էր:

28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի: Պլօցկի զօրաբանակի մէջ ծագած յուզմունքների մասին լեհական լրագիրների հաղորդած լուրերը սխալ են:

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 27 յուլիսի: Ծովային մինիստրի հրամանով դատարանը ձեռնարկեց նորից քննելու անցեալ տարվայ նոյեմբերեան ապստամբութեան գործը: Գործը կարգի է բերվելու երկու ամսվայ ընթացքում: Քննութիւնը յանձնված է քննիչ մասնաժողովի:

ԼՕՆԴՕՆ, 27 յուլիսի: «Դէյլի տելեգրաֆ»-ի Տօկիօյից ստացած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն Ճապօնիան համաձայնում է Դալնիյում չինական մաքսատուն բանալ՝ երկրի խորքը ներմուծվող բոլոր ապրանքներից տուրք վերցնելու համար: Կվանդունեան թերակղզին բաց է մնալու անտուրք առևտրի համար միայն այն պայմանով, որ այդօրինակ միջոց ընդունվի հիւսիսային Մանջուրիայի երկաթուղային կայարաններում: Ճապօնիայի կարծիքով, ներկայումս այն ապրանքները, որ ներմուծվում են Սիբիրի երկաթուղով Մանջուրիա, ինչպէս Եւրոպական Ռուսաստանից, այնպէս էլ Վլադիվոստոկից, կարող են շատ աժան վաճառվել, որովհետև այդ ապրանքներից ոչ մի տուրք չը պէտք է վերցնվի: Սակայն դրանով խախտվում է բոլոր պետութիւնների հաւասարութեան սկզբունքը:

ՄՕՍԿՎԱ, 27 յուլիսի: Այսօր լոյս տեսան երեք լրագիրներ՝ «Моск. Вѣд.» «Русскій Гол.», «Моск. Листокъ»: Ճաշից յետոյ լոյս կը տեսնեն երեկոյեան լրագիրները:

ԿՕՍՏՐՕՄԱ, 27 յուլիսի: Կօզակների և միտինգին մասնակցողների միջև տեղի ունեցած ընդհարման ժամանակ համազարկից վիրաւորված են 6 հոգի, շատերն էլ թեթև քերծուածքներ են ստացել:

ՄՕՍԿՎԱ: Ոստիկանութիւնը գտել է ռումբերի պահեստ: Գտնված են 11 պատրաստի ռումբ, 2 պուդ դինամիտ և շատ զէնքեր:

—Այսօր գործադուլը վերջնականապէս վերջացաւ:

ՕԴԵՍԱ, 27 յուլիսի: Երկաթուղային բեռնակիր բանւորները աշխատանքները վերսկսեցին. նաւահանգստային գործադուլը համարեա վերջացած պէտք է համարել:

ԴԱՂՍՏԱՆ, 27 յուլիսի: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ լրագիրները սխալ տեղեկութիւններ տպեցին վերջին դէպքերի մասին, Սամուրսկի գնդի հրամանատար փոխ-գնդապետ Սաբէցկին հաղորդում է. «Յուլիսի 17-ի առաւօտեան Սամուրսկի գնդի 3-րդ բատալիօնը, վերցնելով հրացանները, ստիպեց իր հետ միանալ 6-րդ վաշտին և վարժիչ խմբին: Միտինգ կազմելով և բաժանվելով մօտ 100 հոգու, զինուորները դիմեցին գնդի հրամանատարի տուն, ուր ժողովվել են բոլոր օֆիցէրները և մի քահանայ: Հարիւրակը պահանջեց ձերբակալել հրամանատարին և մի քանի օֆիցէրների: Կամաց-կամաց ժողովվեցին 400 հոգի: Օֆիցէրները հրաժարվեցին զէնքերը յանձնել: Այն ժամանակ ամբոխը սկսեց անկարգ հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանվեց գնդի հրամանատար Լէմկուլը, փոխ-գնդապետ Պօկրօվսկին, կապիտան Սարդեանը, շտաբս կապիտան Մօրգունով և քահանայ Կալմօվը: Ծանր վիրաւորվեցին կապիտան Խարլամօվը, թեթև՝ փոխ-գնդապետներ Պրինկէվիչը և Մօչուլսկին: Ապստամբների մէջ իսկոյն և եթ երկպառակութիւն ծագեց. Գլխաւորները բռնվեցին հէնց ապստամբների ձեռքով: Ապստամբութեան առիթ ծառայեց ժողովրդի ազատութեան իդէան՝ վարագուրված տնտեսական պահանջներով: Գնդի բացակայ մասը շատ յուզվել է պատահած դէպքից և խնդրել է ուղարկել իրան՝ զսպելու ապստամբներին: Վերջիններիս տրամադրութիւնը ճնշված է. փոշմանում են կատարվածի համար. մեղադրում են արիւնհեղութեան հեղինակ խռովարարներին»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի: Լրագիրների հաղորդած լուրերը, որ Կովկասի հանքային ջրերը պարտքի տեղ պէտք է վաճառվեն, և որ իբր գնահատված են 3 ու կէս միլ. րուբլի, —մտացածին են: Մտադրութիւն կայ մասնաւոր ձեռնարկողներին կապալով տալ հանքային ջրերի եկամուտ բերող մասերից մի քանիսը միայն:

Մինիստրների խորհրդի նիստի հաշւետւութեան մէջ մի սխալ է սպրդել. մատակարարական պէտքերի համար հարկադրված է ոչ թէ 60 միլ. րուբլի, այլ 50 միլ. րուբլի՝ 50 միլ. պուդ ցորեն գնելու համար:

—Պետերբուրգի կանանց բարձրագոյն դասընթացներին կից աշնանը բացվելու է իրաւաբանական ֆակուլտէտ: Ունկնդիրների ընդունելութիւնը տեղի կունենայ ընդհանուր կանոնների համաձայն, սակայն մի պայմանով, որ ընդունվող անձինք կրթական տարվայ վերջը լատիներէնից քննութիւն տան:

ՄՕՍԿՎԱ, 27 յուլիսի: Գեներալ Դուբասովի կեանքի դէմ մահափորձող ուսանող Վօյնօրովսկին պատկանում է այն յեղափոխական կուսակցութեան թռուցիկ ռազմիկ խմբին, որ մահափորձեր է կատարել և գեներալ Նեպլիւևի դէմ Սեվաստօպօլում:—Քաղաքային վարչութիւնը որոշեց ժամանակաւորապէս դադարեցնել տալ հասարակական աշխատանքները, որովհետև նրանք կատարվում են առանց հսկողութեան: Դմիտրօվսկի փողոցում ձերբակալված է մի աղիտատոր, որ դրդում էր ընդհանուր գործադուլ յայտարարել: Երևաց որ նա նախկին ուսանող Գօլուբէվսկին է:

—Բոլոր րայօնների գործարանների բանւորները աշխատանքի կպան: Գործադուլների թիւը այժմ շատ աննշան է:

Տպարանների մեծ մասում աշխատանքները վերսկսվեցին, թէև ոչ բոլոր բանւորների կողմից: Վաղը լոյս կը տեսնեն բոլոր լրագիրները: Ելեկտրաքարշը և ձիաքարշը գործում են:

—Գիւղացիութեան դաշնակցութեան պատգամաւորների գործը քննվելու է սեպտեմբերին: Մեղադրվում են 20 հոգի, որոնք ըստ մեծի մասին գիւղական ուսուցիչներ են, մեղադրվողներից գիւղացի միայն մէկն է:

Խաղաղ վերածնութեան կուսակցութեան և հոկտ. 17-ի դաշնակցութեան նիստը այսօր էլ շարունակվեց, քննվում էր այնպիսի մի կոչ հրատարակել, որը կարողանար միացնել առաջիկայ համագումարին բոլոր առաջադիմական տարրերը: Խորհրդակցութեանը մասնակցում էին և ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամներից մի քանիսը: Մտադրվում է միանալ կադէտների կուսակցութեան հետ ապագայ Դումայում բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներին էլ անցկացնելու և օրինական տեղը փոքրամասնութեան տալու համար:

—Համազեմստւային կազմակերպութեան գործերով Ուֆիմսկի, Սամարսկի և Օրենբուրգսկի նահանգները մեկնեց իշխան Օրբելիանին: Կազմակերպութիւնը ներքին գործերի մինիստրութիւնից բարեգործութեան գործի նախնական ծախսերի համար ստացել է 100,000 րուբլի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի (Պաշտօնական). Յուլիսի 27-ին, կառավարիչ սենատի տրված Բարձրագոյն ուկազով նշանակվում են.—Պետական Խորհրդի անդամ շտալմէյստէր իշխան Վասիլչիկովը՝ երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչ, մնալով Պետական Խորհրդի անդամ շտալմէյստէր Ֆիլօսօֆօվը առևտրի և արդիւնագործութեան մինիստր, մնալով Պետական Խորհրդի անդամ և շտալմէյստէր. և ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական կամերհեր Իզվօլսկին՝ սուրբ սինօդի օբէր-պրօկուրօր, մնալով պալատական տիտղոսի կոչման մէջ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիս, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵԱՆԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզական. հ.
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. ծննդաբերութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՁԵԼԻՇՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՎԱՐԴԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐԻ. ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. ծննդաբերութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Ե. Գ. ԱՐԵՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համալսարանը (կոմ սիֆիլիսի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Լեոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշւի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. ո.) 199—300

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից փաքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաւոր ալբոմները
ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտենբերգի գրավաճառանոցում, Գինոնու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆէթվաճեանի մօտ, Օդեսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ:
Ալբոմի հատը 1 րուբ. 20 կոպ.:
Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% զեղչ: Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշւով են:
Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին:

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Բուրգէնովի № 7. պօդեզդ Նօտար Միքերովի: (ե.հ.շ.) 32—100

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ՋԱՆԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
I պրակ. գինն է 8 կոպ.
Դիմել հայ գրավաճառներին:
4—10

ՀՐԱՒԷՐ

Հաւլաբարի ԷՋՄԻԱԾՆԵՑՈՑ Ս. ԳԷՈՐԳ եկեղեցու յարգելի ծխականներն և նոյն եկեղեցու դպրոցում սովորող ոչ ծխական աշակերտների ծնողներ ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎԻ կիրակի, ամսիս 30-ին, առաւօտեան 10 ժամին խորհրդակցելու դպրոցի ապագայի մասին:

Հոգաբարձութիւն
(ու. շ. կ.) 3—2

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդի առաջարկութեան համաձայն, սուրբ Սարգիս եկեղեցու 21 և աւելի տարեկան հասակ առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամի 9-ին մէկ պատուիրակ ընտրելու ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու:

Սուրբ Սարգիս եկեղեցու քահանայ՝
Կոստանդին Արարատեանց
ու. շ. 2—2

ՀՐԱՒԷՐ
(երկրորդ անգամ)

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր առաջնորդի առաջնորդութեան համաձայն՝ Հաւլաբարի հայոց սուրբ Կարապետ եկեղեցու 21 և աւելի տարեկան հասակ առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցի, ամսիս 30-ին, կիրակի, ժամը 10-ին, երեք պատուիրակ ընտրելու՝ ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու:

Գաբրիէլ աւագ քահ. Տէր-Գաբրիէլեանց
ու. շ. կ. 2—3

ՀՐԱՒԷՐ

Սամարղանդի հայոց երկսեռ ծխական դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ (ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ) շաբաթական 24—26 դասով: Ռոճիկ 720 րուբլի, բնակարան և վառելիք. և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ (գիմնազիաւարտ) շաբաթական 20—22 դասով. ռոճիկ միայն 500 րուբլի: Հասցէն՝ Самаркандъ, Николаевская ул. № 8. Попечительству Армянск. училища. (շ. ե. հ.) 1—4

ՀՐԱՒԷՐ

Վերայի ս. Խաչ եկեղեցու 21 տարին լրացած բոլոր ծխականների երկսեռ ծխականները հրաւիրվում են ժողովի ամսիս 30-ին, ցերեկվայ ժամը 10-ին, ընտրելու մի պատուիրակ:

Ծխատէր Գէորգ քահ. Տէր-Աւետիսեանց
(շ.) 1—1

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակի և Նորին բարձր սրբազնութեան Թեմակալ առաջնորդի առաջադրութեան համաձայն Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու ծխականները երկրորդ եւ վերջին անգամ հրաւիրվում են, կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 10-ին, Բեթղեհէմի եկեղեցին՝ ընտրելու չորս պատգամաւոր, որոնք Վանքի և Մողնու եկեղեցիների պատգամաւորների հետ միասին պիտի ընտրեն Մարիամեան Յովնանեան օրիորդաց դպրոցի համար չորս հոգաբարձու: Այս անգամ ևս ծխականներին առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվում:

Գէորգ քահ. Մեհրաբեանց
(շ. կ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կոնդակների և Թեմիս սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն ամսիս 30-ին, կիրակի, ժամի 11-ին Շամքոռեցոց ս. Աստուածածնի եկեղեցու 21 և աւելի տարեք ունեցող երկսեռ ծխականներն երկրորդ անգամ հրաւիրվում են երեք պատուիրակի ընտրութեանը մասնակցելու՝ ռուսահայոց եկեղեցական առաջին կենտրոնական չորս պատգամաւորների ընտրութեան համար: Ժողովը կանոնաւոր կը համարվի, որքան ընտրողներ ևս ներկայ լինեն:

Համազասպ ա. ք. Տէր-Յովհաննիսեանց
Երեցփոխ՝ Ար. Ղոնդախսազեանց
(հ. ու. շ.) 3—3

Կարսի շրջանի Բէնգլի-Ահմեդ գիւղի ծխականների դպրոցի համար հարկաւոր են ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ. Թեմական դպրոց աւարտած, որոնք աւանդելու են բոլոր առարկաները ա. և բ. բաժանմունքներում. երգեցողութեան ուսուցիչը պէտք է երգէ եկեղեցում (տօն օրերին) իր կազմած միաձայն խմբով. ռոճիկ տարեկան 400 ր. ամեն մէկին, նոյնպէս և բնակարան և վառելիք: Դիմել՝ Карсъ, Мовсесу Согомонянцу. (շ.ե.հ.) 1—3

„Գուտենբերգ"
գրավաճառ. վաճառվում են հետևեալները.
«Արեան ձայներ» (երգեր) 60 կ.:
«Կոյլաւ», գերմաներէնից հայերէն բառարան, փառակազմ գինը 7 ր.:
«Ռուս., հայերէն բառարան, Յ. Դաղբաշեանի, գինը 8 ր., շքեղ կազմով և պօստի ծախքով 10 րուբ.:
«Նոյն հեղինակի» հայ.-ռուս. բառարանի բաժանորդագինն է 5 ր., ռուս.-հայեր. բառարանի բաժանորդների համար 4 րուբ. (լոյս է տեսել 2 պրակ):
«Գունաւոր ալբոմներ» Ֆէթվաճեանի, կազմ. գինն է 1 ր. 20 կոպ.:
«Բաց նամակներ» զանազան գոյներով Անիի տեսարաններից, հատը 10 կոպ.:
«Հոգի Հայաստանի» (գունաւոր), յարմար է և ասեղնագործութեան. գինը 5 րուբ.:
«Գիւղացիներին», Թարգմ. Հրանոյշի, գ. 5 կ.:
«Մայրենի լեզու, Ղ. Աղայեանի», 4-րդ տարի, պատկերազարդ. գինը 90 կոպ.:
Գաւառացիները 2—3 րուբլու գրքեր ապսպրած ժամանակ կարող են ուղարկել 2—3 րուբլու «պօստի մարկաներ», միայն նամակները պէտք է ապահովացրած լինեն:
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ Гутенбергъ, Г. И. Галустянцу. 2—2

Դերբենդի ուսումնարանի համար հարկաւոր է ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ գիմնազիաւարտ, ռուսաց լեզուի և ձեռագործի. պէտք է գիտենայ լաւ հայերէն: Դիմել «Մշակ»-ի խմբագրատուն, Օրիորդին:
(շ. կ.) 1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Գ. Ալթունեանի. ծխական դպրոցների համար.
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.
Դիմել՝ Էջմիածին Ճեմարանի քարտուղար, պ. Քոչարեանին և Ալեքսանդրապօլ հեղինակին: 4—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցարսկի-Կալօդցայի հայ հասարակութեան համար հարկաւոր է մի

ՔԱՀԱՆԱՅ (Նորընծայ)

Ուսումն աւարտած լինի ճեմարանում կամ Ներսիսեան դպրոցում, որ կարողանայ բացի ժամակարգութիւնից դասեր ունենալ փոքր աշակերտների հետ հայերէն և ռուսերէն: Պայմանները իմանալու համար թող դիմեն Թիֆլիս, Միջին-Փողոցում, եղբ. Եարալեանցներին:

ու. ե. 2—7

ՂԱՐԱՍՈՒԲԱԶԱՐԻ

հայոց ուսումնարանի համար ՀԱՐԿԱՒՈՐ է մի փորձառու ուսուցիչ, որ կարողանայ և եկեղեցու համար քառաձայն խումբ կազմել: Գերադասութիւնը տրվում է Ներսիսեանաւարտներին: Տարեկան 600 րուբլի ռոճիկ, բնակարան, վառելիք և ծառայ: Դիմել այս հասցէով՝ Карасубазаръ (Таврич. губ.) Попечительству Армянскаго училища.

(շ.) շ. 1 ան. 5—6

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 12 ր. գիշ.
Ալեքսանդրապօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 08 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալեքսանդրապօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստրութեան տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24/4.)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքը աւարտողներին տրվում են ատեստատներ: Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշւապահութիւն (պարզ, իտալական, բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանոնագրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն.) 5) առևտրական թղթակցութիւն 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղել): Առարկաները ուսուցանվում են Վիեննայի առևտրական ակադեմիայի ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.: Կուրսերին կից բացվում են
ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(Գերմաներէն, Ֆրանսերէն և Անգլիերէն)
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 1-ից ամենայն օր երեկոյեան 4—7 ժամը: Ծրագիրը և կանոնները ուղարկվում են և տրվում են ձրիապէս կուրսերի հիմնողի բնակարանում
1—10 Առևտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշւապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա:
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն մի օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը:
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Тер-Каспарову.
(ե. շ.) 6—30

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5